Շունը շարժում ե իր անդամները և այնպես տաքանում: Իսկ կատուն կծկվում ե մի տեղ, վոտները ծալում, իր տակն ե անում, պոչն ել բերում ե փորովը պատ տալիս ու այնպես տաքանում:

Այսպես ամեն մեկը մի կերպ գարուն ե հասնում:


Ուրիշ կենդանիներ ի՞նչպես են պաշտպանվում ցրտից:
Առաժ.— Զմեռվա վարդը կրակն ե:

40. ՊԱՏՄԵՑԵՔ ԱՅՍ ՊԱՏԿԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ



1. Տարվա վո՞ր յեղանակն ե պատկերացնում այս նկարը յե՞վ վո՞րտեղ:
2. Ո՞վ ե յեկել յե՞վ ինչո՞ւ համար ե յեկել այդտեղ:
3. Ո՞վ ե պատահել նրան յե՞վ ինչո՞ւ ե այնպես նայում:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ



41. Գարուն

Դեռ հողը չէր տվել ծիլ ու ծաղիկ, դեռ կանաչ չկար, յերկիրը մերկ էր:

Յեկավ գարունը, անցավ դաշտերով, փորտեղ փոս կտեսց՝ խոտը կանաչեց, տերևը բացվեց, ծաղիկը ծաղկեց: Վարդ, մեխակ, շուշան, նարդիզ, նունուֆար և բյուր ծաղիկներ բուսան ամեն տեղ:

Յեվ ուր փոք նայեց, նրա նայվածքից անդ ու անդատան իսկույն կանաչեց, թավիրշով ծածկվեց:

Լորին, չինարին, կեչին ու կաղնին և այլ շատ ծառեր անտառներ դարձան, սար-ձոր ծածկեցին:

Ժպտաց գարունը. ժպտաց ամեն ինչ, և՛ ծառ, և՛ ծաղիկ ժպտացին, ասին.

— Քո գալի բարի, դու սիրուն գարուն:

Ա. ա. ծ. — Մի ծաղկով գարուն չի գա:

42. Միրուն գարուն

Չուզված, զարդարված
թավիշ կանաչով,
ցուլում և դաշտը
փոսկի ճաճանչով:
Միրուն մայիսը
գոհար և մաղել,
Գարունը քանի՞ ամիս ունի: Վորո՞նք են գարնան ամիսները:

Ճաղկանց թերթերը
շողել ու շաղել:
Հազար տեսակի
թռչուն և յերգում
ու կանաչ դաշտը
զընգում-զըրնգում:
Գարունը քանի՞ ամիս ունի: Վորո՞նք են գարնան ամիսները:

43. Են ով և...

Սոխակ ունի
իր դրկին,
վարդիկ ունի
իր սրաին,

արոտ դալար,
ուսերին,
սարյակ, ծիծառ
ճղներին:

44. Արագիլներ

Չյունը հալվեց, շուրը մեծացավ, հողը ծիլ տվեց, դաշտը կանաչեց: Կեռասենին բացեց իր բողբոջները, գարթեցին միջատները, յերևացին թռչունները:

Հեռու աշխարհից, սաք յերկրներից յեկան արագիլներն ու առաջին անգամ ճահիճներին տես գնացին: Գորտերը վախից մտան ճմբերի տակ:

— Ինչո՞ւ յեն հենց եստեղ գալիս, ես յերկարլուրդ լազլաները, — կոկոացին նրանք, — թող վեր ընկնեյին իրենց տեղերը, կարծես կարմիր խնձոր ենք ուղարկել յետևներից՝ յեկեր: Յեկող եյիք, ճմեռք քայիք. գոնե յերեսներդ չեյինք տեսնի:

Խեղճ գորտեր, ճիշտ եյին ասում, բայց լսողն ո՞վ էր: Արագիլները լուռ ու մունջ իրենց բանին եյին, — վորտեղ գորտ եյին նկատում, իսկույն հոպ, բռնում եյին...

Յե՞րբ են գալիս արագիլները: Վո՞րտեղ են լինում գորտերը ճմեռք: Ա. ա. ծ. — Վորտեղ հաց, հատիկ կաց:

Վորտեղ տանձ կա, պոչը հեռն և:

45. Մարտի սկիզբը

Դեռ մարտի սկիզբն է, ո՞վ է բանի տեղ ղնում թե սպիտակ պատանում կյորված սարերն ու բլուրները յերբեմն իրենց կատաղի գիժ քամիներով քիչ է մնում աշխարհը տակով անեն:

Բայց ո՞վ է գիժ, վոր մարտի փոփոխական բնությունից մազաչափ անգամ յերկյուղ անի: Մարտին չե՞ ճանաչում, Ի՞նչ է...

Գիժ մարտին փչող քամիների շնորհքը մեծ է... Փչեցին թե չե, ել հերիք... ամպերը սրտաճաք յեղած գլուխները կառնեն ու կը կորչեն...

Կորան թե չե աչքդ բարին տեսնի...

Կապույտ յերկնակամարի միջից պայծառ արև կը փայլի ու սառույցի հետքը կը կտրի:


Մարերի ու դաշտերի ձյունները կը հալվեն, ջուր կը կրտրեն... Մեկ-մեկու առաջն ընկած, կերթան ձորերը կը լըցվեն, գետեր կը դառնան ու չորս ամսվա մեռած յերկիրը, մեկ ել տեսար, հարություն կառնի:

Եսպես է գիժ մարտը, ես է նրա կամքը: Եսոր, ցուրտ, եզուց տաք: Եսոր մրրիկ ու մառախուղ, եզուց՝ արև-արեգակ... Լավ ճանաչեցեք նրան:

Ի՞նչպես է սկսվում գարունը:

46. Առաջին ծաղիկներ

Վերջին ձյունը դեռ չի հալել,
Ձնծաղիկն է արդեն ծլել.
Մանուշակն է գարթել քնից,
Ձեռ կշտանա անուշ հոտից.
Պուրակումը հասմիկ, հափրուկ,
Առվի ափին անմոռացուկ:



47. Մանուշակ

Կապույտ գլխով, կանաչ վոտով,
յես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թեև տունկա փոքրիկ է, ցած,
արոտներում միշտ թաք կացած,
բայց իմ փունջը ամենի տան—
թե աղքատի, մե մեծատան,
իբրև գարնան առաջին գարդ,
միշտ տեսնում է ամեն մի մարդ:
Յես եմ սիրուն գարնան գուշակ,
իմ անունս է Մանուշակ:



Մանուշակից առաջ վո՞ր ծաղիկն է ծաղկում:




48. Մեղուների առաջին պտույտը

Յեկավ գարունը: Ձյունը հալավ, ջուր դարձավ—գնաց, յերևաց դալար կանաչը, ծաղկեցին ծառերը: Զարթնեց մեղուն իր յերկար քնից, տրորեց աչքերը և գնաց ընկերներին գարթեցնելու: Դուրս յեկան մեղունները փեթակներից, տեսան վոր արեգակը, լույս է տալիս և տաքացնում, ուղղեցին իրենց թևերը և թռան գնացին իրենց համար կերակուր ձարելու:

Թռան իջան խնձորենու վրա, հարցրին—«Ուտելու բան չունե՞ս: Ամբողջ ձմեռը չենք կերել և սաստիկ քաղցել ենք»: Խնձորենին պատասխանեց.—Վոչ, դուք շատ կանուխ եք յեկել ինձ մոտ, իմ ծաղիկները դեռ կոկոն են:

Թռան մեղունները բալենու վրա. — «Սիրելի բալենի, մեզ քաղցած մեղուններիս համար ծաղիկներ չունես»: Բալենին պատասխանեց. — Վաղը յեկեք, մեղուններ, այսօր իմ ծաղիկները դեռ չեն բացվել:

Տխուր և սոված մեղունները արդեն ուղում էին թռչել իրենց փեթակը, յերբ հանկարծ թփի տակ նկատեցին մի մութ կապույտ ծաղիկ: Այդ մանուշակն էր: Նա բաց արեց մեղունների առաջ իր հոտավետ և քաղցր հյութով լի բաժակը: Մեղունները կուշտ կերան, խմեցին և տուն տարան: Կետները առաջին մեղրը:



49. Ծիծեռնակիկ

Դու կապուտակ ծովով արի,
 Թեթե, Թեթե թևով արի,
 ծովի փրփուր լանջով արի,
 գարնան յերգով, կանչով արի...

Արի, արի սիրուն ծիծեռ,
 արի, արի, գարուն դու բեր:

Սեիկ մեիկ աչիկ ունես,
 մկրատաձև պոչիկ ունես,
 ծովի փրփուր լանջով արի,
 գարնան շնչով, կանչով արի...

Արի, արի, սիրուն ծիծեռ,
 արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կը գա,
 անծիծեռնակ գարուն չը կա,
 ծովի փրփուր լանջով արի,
 գարնան շնչով, կանչով արի...

Արի, արի, սիրուն ծիծեռ,
 արի, արի, գարուն դու բեր:

50. Արագիլ

Արագիլ, բարով յեկար,
 հայ, արագիլ, բարով յեկար,
 դու մեզ գարնան նշան բերիր,
 մեր սրտերը ուրախ արիր:

Արագիլ, յերբ գնացիր,
 դու մեզանից յերբ գնացիր,
 հա փչեցին բուք ու բորան,
 ծաղիկները ամեն տարան:


Արագիլ, բարով յեկար,
 հայ, արագիլ, բարով յեկար,
 բունըդ շինի դու մեր ծառին,
 մեզ մոտ մնա ամբողջ տարին:



51. Գետակ

Յեկավ ձյունը, ծածկեց դաշտ
 ու անտառ. լոեց գետակը, փակ-
 վեց սառուցի տակ. բայց գարունը
 յեկավ, մարտ, ապրիլ, մայիս. գե-
 տակը նորից վազում է, խաղում,
 ձկան հետ նորից նա պար է բրո-
 նում, արևն է շողում, նրան համ-
 բուրում:

Գետակի ափին, կանաչ ծառի
 տակ ձկնորսն է նստել. թռչնակը
 սիրուն գետափին, կանաչ թփերի միջից իր յերգն է ասում:
 Մարի, մայր բաղը իր ճուտիկներով գետակն է մտել.
 ջրի յերեսին սահում են, լողում մայր ու ճուտիկներ:



52. Մարտ

Ա՛խ, եսպես ել գիժ ամիս.
 մարդու հանգիստ չի տալիս:
 Եսոր ուրախ որ կանի,
 վաղը անձրև ու քամի.
 առավոտը պայծառ ող,

կեսորը մութ ու ամպոտ:
Մին հազնում է սպիտակ,
մին կանաչին է տալիս.
մի որ ցուրտ է, մի որ տաք,
մին խնդում է, մին լալիս...
Ա՛խ, եսպես ել գիժ ամիս:

53. Գարնան գալը

Որ որի վրա ողբ տաքանում է: Արևածագը շողում է,
յերկինքը պայծառ է: Արեգակը յերկրի վրա ավելի բարձրից
է ծագում. աղամսիները պտույտ գործելով, ամբողջ որը
դունդունում են կտուրների վրա: Ահա ուռենին զուգվել է
բաց է արել իր սիպտակ բողբոջները, դուրս են թափվել
խրճիթներից յերևիսաները, ուրախանում են, տաքանում
են արևի շողերի տակ:

Գետակի սառուցն էլ արդեն ճեղք տվեց, գետակը բըշ-
բըշում է, ձմռան կապանքներից իրեն ազատել է. գծու-
թյուն է անում, իր ավերն է փորում, մեծացել է, լայ-
նացել նրա ծափն ու ծիփանքը հեռվից լսվում է. ահա մի
ամպ վազեց յեկավ, բարակ անձրև է մաղում, դաշտում
կանաչ յերևաց, դաշտը կանաչեց:

Ահա և անտառը նոր շորեր հագավ, թռչունները սկսե-
ցին յերգել, խոտերի մեջ ծաղիկների գլխիկները յերևացին.
Գեղեցիկ է գարունը, ծաղկե շապիկ է հագել. ինչքան
նա լուսավոր է, ինչքան տաք է, ինչքան պայծառ:

54. Խոսնակ քոչուկը

Թռչունը խոսնակ
բնիկ է հյուսում,
ծղնոտ կրելով
իր յերգն է ասում:

Ապրում է այնպես,
ազատ իր կամքին,
զարթնում է կանուխ
լուսաշող ծեղին:

Ու թևին տալով,
դեպի դաշտ թռչում,
դաշտերի վրա
իր յերգը կանչում:
Ու ժիր մաճկալը,
լսելով յերգչին,
ինքն էլ է յերգում
հենված իր մաճին:


55. Գառնիկ արայեր

1

Յերկու վորբեր,
քուր ու արայեր,
կորսձ գնում են հեռու.

արևը վառ,
ճամպեն յերկար,
գոչ աղբյուր կա,
վոչ առու:

Քույրը մեծ էր,
վոնց վոր լիներ
կըհամբերեր արևին,




բայց արայերը փոքրիկ էր դեռ,
չէր դիմանում ծարավին:
Գրնում են, դընում, տեսնում են ճամպին
կովի վոսնատեղ՝ մեջը լիքը ջուր:
«Քուրիկ ջան, քուրիկ, յես շատ եմ ծարավ,
ինչ կլինի թողնես խըմեմ մի պուճուր»:
— Չէ, արայեր ջան, չէ, դու կով կը դառնաս,
կովի կըճղակի տեղից մի խմի.
մի քիչ էլ կացի... քիչ էլ վոր կենաս,
առաջներս պաղ աղբյուր կա հիմի.

2

Յերկու վորբեր,
քուր ու արայեր,
գնում, գնում են հեռու.

արևը վառ,
 ճամպեն յերկար,
 վոչ աղբյուր կա, վոչ առու:
 Գրնում են, գրնում, տեսնում են ճամպին
 ձիու վոտնատեղ՝ մեջը լիքը ջուր:
 «Քուրիկ ջան» քուրիկ, յես շատ եմ ծարավ,
 ինչ կլինի թողնես խրմեմ մի պուճուր»:
 — Չե, ախպեր ջան, չե, դու ձի կը դառնաս,
 ձիու սմբակի տեղից մի խմի:
 մի քիչ ել կացի, քիչ ել վոր կենաս՝
 մոտիկ մի գուլալ աղբյուր կա հիմի:

Յերկու վորբեր,
 քուր ու ախպեր,
 գրնում, գրնում են հեռու:
 արևը վառ,
 ճամպեն յերկար,
 վոչ աղբյուր կա, վոչ առու:
 Գրնում են, գրնում, տեսնում են ճամպին
 գառան վոտնատեղ՝ մեջը լիքը ջուր:
 Փոքրիկ ախպերը ել չի համբերում,
 քրքրից թաքուն խրմում՝ է պուճուր:
 Քույրը մին ել յես է նայում,
 վոր մի գառը մղկատալի
 ու մայելով վազ է տալի:
 — Ա՛խ, մի Մանուկ, վորբ ու անտեր,
 իմ անլեզու, Գառնիկ-Սխպեր,
 ել վոճս անեմ, ինչ անեմ յես...
 կանչում է խեղճ Մանուշն եսպես,



վայ է տալիս,
 լալիս, լալիս.
 բայց ել ինչ աներ,
 բայց ել վոճս աներ...
 Յերկու վորբեր,
 քուր ու ախպեր,
 գառն ու աղջիկ
 մոլորված,
 հեռու հանդում,
 տըխուր-տըտում
 գրնում, գրնում են
 կորած:

Սոված ու ծարավ գրնում են, գրնում.
 գրնում են, գրնում, չը գիտեն թե ուր,
 վերջապես մի հով անտառ են մըտնում,
 անտառի միջին մի գանգակ աղբյուր:
 Կուշտ-կուշտ խմում են սառը ջրից:
 հետո Մանուշը ծառն է բարձրանում,
 Գառնիկ-Սխպերն ել ծառերի տակին
 մուշ-մուշ արածում, արոճ է անում:
 Իրիկվան պահին խրխինջ ու քրքրիջ...
 լըցվում է հանկարծ անտառն աղմուկով,
 մոտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
 Լըսում են նրանք ահով ու դողով...
 Յեվ ահա վոսկի սանձերից բռնած՝
 բերում են ջրեն ձիանքն արքայի.
 ամենի ձիանքն աղբյուրից խըրանած՝
 ծառս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի:
 Մըտիկ են տալի ծառայքը մեկ ել,
 վոր սիրուն մի ցոլք ջրի մեջն ընկել,
 ու ջուրը քանի ալիք է տալի,
 նա յել ջրի հետ գնում է գալի:
 Նայում են վերև: Ի՛նչ տեսնեն, ասաված,
 մի հուր-հրեղեն, մի շամաղ աղջիկ,
 ծառի ճյուղերին նազելի նստած՝
 նայում է ներքև լուիկ ու միջիկ:
 Ու ծառաները գառն ու աղջկան
 առնում են բերում պալատն արքայի.
 «Ո՞վ ես դու, սիրուն, հարցնում է արքան,
 անբան գառան հետ ինչ ես ման գալիս»:
 Կանգնում է աղջիկն, այստեղ նորից նոր
 պատմում է, ինչ վոր պատմեցի յես ձեզ,
 թե ապրած կենաս, ահեղ թագավոր,
 մեր բանը, հապա, եսպես ու եսպես...
 Թագավորն յերբ վոր լըսում է մին-մին՝
 և շատ ցավում է և շատ հավանում,
 անում է նրան իրեն թագուհի,
 յոթն օր, յոթ գեշեր հարսանիք անում:


Պալատումը կար նախանձոտ ու շար
 մի պտռավ կնիկ, հընուց ազախին.

նախանձում ե սա, թե վոնց պիտի գա
մի վորը՝ թագուհի դառնա մեր գլխին:
Մի որ ել գալիս, գըլուխ ե տալի,
առաջը կանգնում կեղծավոր գովում.
— Արի քեզ ասենեմ, սիրուն թագուհի
չըփ-չըփ լողացնեմ շարմաղ են ծովում:
Խարում ե, տանում, գցում ծովի մեջ,
շորերը ասում, հետ բերում քաղաք,
հագցընում իր սև, դարձվոր աղջկան.
պալատ ուղարկում թագուհու տեղակ:
Յերեսը ծածկած թանձր շղարշով՝
պալատ ե մտնում են սուտ թագուհին,
ու թագավորն ել կասկած չի տանում,
թե ով ե յեկել բազմել իր գահին:
Բայց ինչ անում են, ինչ վոր չեն անում,
չեն կարում ել տուն բերեն գառնիկին.
բըղղում՝ ես ափից են ափն ե վազում,
բըղղում՝ են ափից հետ գալի կրկին:
Ի՞նչ անենք սրան, վոնց անենք սրան:
Պառավն ու աղջիկ շատ միտք են անում,
վերջը գալիս ե դարձվոր թագուհին
անկողին մտնում, հիվանդ ձևանում:
— Վայ, աման, մեռա... հայ, հարայ, մեռա...
«Վոթեղդ ե ցավում, սիրուն թագուհիս,
ինչ կուզես, ասա» — խնդրում ե արքան,
խնդրում, գըլխովը պառայտ ե գալիս:
— Ախորժակ չունեմ... յես բան չեմ ուզում...
Գառնիկի մըսից վոր լինի՝ կուտեմ...
Յեվ թագավորը մտում ե սառած,
սառած, շվարած, կանգնած կնոջ դեմ:
«Բայց չե՞ վոր, Մանուշ, քո յեղբայրն ե նա,
վոնց ես նրա միտն ուզում դու հիմա»...
— Ի՞նչ անեմ, ինձնից նա աղիղ հո չի.
յես վոր մեռնում եմ, թող նա յել կորչի...
— Վայ, հարայ, մեռա... հայ, հարայ, աման...
Ու թագավորը տալիս ե հրաման,
«Կըրակ վառեցեք,
դանակ սրեցեք,
բերեք մորթեցեք Ախպեր Գառնիկին,
վոր առողջ լինի իր քույրը տիկին»:
Թագավորն եսպես պատվեր ե տալիս,

պատվեր ե տալի ու դուրս ե գալի,
գնում ե ծովափ սաստիկ սրանեղած,
թե վորքան Մանուշն անսիրտ ե յեղած...

6

Մայում ե, լալիս Գառնիկ Ախպերը,
լացացնում ե ժեռ ծովի ափերը,



մի ափից բռնած մյուս ափն ե թռչում,
մարդկային լեզվով քրոջը կանչում.
— Գուրիկ ջան, քուրիկ, կրակ են վառում,
կրակ են վառում, դանակ են սրում:
Գուրիկ ջան, քուրիկ, լսի՛ր անդունդից,
հասի՛ր անդունդից, սպանում են ինձ:
Լսում ե արքան՝ տեղը քար կտրած,
և ալիքների միջիցը հանկարծ
շատ ծանոթ մի ձայն հեռու, խոլ ու խոր,
կանչում ե քնքուշ, կանչում ե անզոր.
«Ախպեր ջան, ախպեր, անհեր ու անմեր,
անքուր ու անտեր իմ Գառնիկ-Ախպեր,
դժվար ե տեղս, ձենս չեն լսում,
ձենս չեն լսում ձեռքս չի հասնում:
Ա՛խ, չար պառավը սև արավ որըս,
այժմ ել կսպանի Գառնիկ-Ախպորըս»:
7

Լսում ե արքան, պալատն ե վազում
պատում ե քողը թագուհու դեմքի.
պատում ե, տեսնում... բայց ինչ ե տեսնում,
ո՞վ ե իր գահին յեղել թագուհի...
— Յեկեք, ձկնորսներ, ուռկան ձգեցեք,
հանեցեք ծովից մեր լավ Մանուշին.

յեկեք, դահիճներ, ծովը ձգեցեք
կախարդ պառավին ու ես հրեշին:
Եսպես բարկացած գոռում ե արքան,
ժողովուրդն ամեն թընդում ե ցավից,
գալիս ե կանգնում, ձրգում ե ուռկան,
անմեղ Մանուշին հանում ե ծովից:
Գառնիկ-Ախպերն ել անչափ խնդումից
պատռում ե անբան վոչխարի մորթին,
դուրս գալի կանգնում սիրուն պատանի,
ուրախ ու պայծառ՝ իր քրոջ կողքին:
Իսկ չար պառավին, իրեն աղջկան,
վոր խաբել էյին աշխարհ բովանդակ,
վրզներից կապում շաղացի քարեր,
ձրգում են ծովի անդունդը անտակ:
Յերկու վորբեր,
քուր ու ախպեր,
առած պատիվ, գահ ու թագ,
աշխարքն ելի
խնդաղ ու լի,
չարը թաղված ծովի տակ:

56. Հատիկ


Պառկիր, իմ հատիկ,
մթնում, հողի տակ,
ել քեզ չի ժպտա
կարմիր արեգակ:
Յես քեզ կը ծածկեմ
հողով վերևից,
ծարավ չեմ թողնի,
Չուր կտամ առվից:
Թե հանկարծ բացվեր
քո լեզուն թոթով,
գուցե ասեյիր
սրախ խոր վշտով:
— «Ել դուրս չեմ գա, չե,
իմ խոնավ փոսից,
կարոտ կը մեռնիմ
արևի լույսից»:

Դու մի վհատի,
իմ սիրուն հատիկ,
տեղդ փափուկ ե,
մի հողիդ մըտիկ:

Շուտով կը զարթնես,
չես մեա հողում,
կը ծլիս, ծաղկիս,
կարձակես ցողուն:

57. Փոքրիկ յերկրագործ

Յեկավ գարուն, յեկան հավքեր,
տաքցավ արև, գըլգըլան ջրեր,
յեկան վարի-ցանքի որեր:
Գոռնկն ամոլ արվից,
սագերն հորիք լըծեցի,
ճնճողկն հոտաղ վարձեցի,
կաքափն հացվոր բոնեցի,
արտ ունեյի՝ վարեցի,
ցորեն, դարի ցանեցի:
Վ՞որտեղ եր նրա արտը:



58. Կարմիր բաշիկը

Կարմիր բաշիկը մի սիրուն, կարմրաթշիկ, շարմաղիկ
մանուկ ե: Առավոտ յան վաղ յեխում ե ու անցնում գաշ-
տով:

Վոր անցնում է դաշտով՝ ժպտում է ու ճիտ անում պատահողին:

Վոր ամպն է վազում՝ բալիկն է տապ անում:

Վոր բալիկն է տապ անում՝ ամպն է տխրում, լաց լինում ու պուտ-պուտ արցունք թափում:

Վոր ծառին է նայում բալիկը՝ ծառն է դալարում:

Վոր ծաղկին է նայում՝ ծաղկին է շողում-շողշողում:

Վոր արտին է նայում՝ արտն է դեղնում, դեղին վոսկի կտրում:

Վոր աղբյուրին, առվին, գետին է նայում՝ ջուրն է ցուլում, ցուցլում:

Կարմիր բալիկի լուս-յերեսին չես կարող նայել, աչք է ծակում, աչք է ծակծկում, ասեղներ ունի:

Թե ասես, կարմիր բալիկի անունն ի՞նչ է:

Հանելուկ.— Են ի՞նչն է. մի թավի մեջ յերկու ձուկ մինը սառն է, մինը տաք:

59. Արեւն ու ծիածանը

Անձրևից հետո ծագեց արևն ու ծիածան կապեց:

— Նայիր ինձ, քեզից գեղեցիկ եմ, — ասավ ծիածանն արևին, — տես քանի գույն ունեմ. — կանաչ, կարմիր, կապույտ, դեղին...

— Բայց գիտե՞ս, վոր յես եմ քեզ այդքան գույն տվողը, — ասավ արևը ծիածանին:


— Դո՞ւ... սուտ է, — ժպտաց ծիածանը:

— Սուտ է, դե վոր սուտ է, հիմի տես, — ասավ արևն ու մտավ ամպի տակ:

Արևն ամպի տակ մտավ թե չէ, ծիածանն էլ անհետացավ:

Հանելուկ.—
Յերկու գույնից մի անուն,
յոթը գույն միանում:

Առաձներ.
Ինչ վոր չգիտես, մի խոսի:
Շատ իմացի՛ քիչ խոսի:



60. Ծիածան

Մթին առապերից
յեկավ հորդ անձրև,
պարզեց յերկինքը,
ծագեց լույս արև:

Չրի կաթիլներն
ալ գոհար դարձան:

Քամին հանդարտեց...

չը կա ել փոշի,

հողը տաքացավ,

ծխեց գուրըշի:

Կանաչ ու կարմիր
կապեց ծիածան,

61. Կողովագործ աղվեսը

1

Մի որ արջը
լնգին-լնգին,
կոպալ դունջը
ծնկին-ծնկին,
ճամպեն վոլոր,
սիրտը մոլոր,
արտասվում էր
մաղիկ-մաղիկ,
կտրատում էր
սիրտ ու աղիք:
— Ա՛խ իմ ձագեր,
քոթ-քոթոթիկ,
բոտ-բոտոտիկ,
չեկլիկ-մեկլիկ,

գլոր կլոր
իմ բալիկներ:
Ո՛ւր եք, ո՛ւր եք,
երված սրտիս,
ծարավ սրտիս
մի պուտ ջուր եք:
Ինչո՞ւ եսպես
սխալվեցի,
չար աղվեսի
հետ ճամպեցի
են քանդված
բողազավանք*.
Ել ո՛ւր մնաց
«գնանք ու գանք»:

2

Արջը չեկած
ճամպի կեսը,
ձենը առավ
գողը աղվեսը:
Պզզաց, վզզաց
սար, ձոր անցավ,
մի ուռնու
նա մոտեցավ:
Ուռը քաղեց
ուռի ծառից,

կողով գործեց
քաղած ուռից,
ու սկսեց
իրա յերգը.—
— Նազիկ-նուզիկ,
փափկամաղիկ
յես աղվեսն եմ
սարի շրջիկ,
պաչս փնջիկ:
Իմ ձեռքին է

*) Բողազավանք նշանակում է բուկ, բողազ:

Վողջ աշխարհը,
 ել ձվ ունի
 ես իմ խելքը:
 Գիտեմ սողալ,
 մտնել լողալ,

3

Մեկ ել՝ պոռոտ... Արի՛ ըստի
 արջը չուստ-չուստ... մի քիչ նստի,
 թե՛ ձագերս, քիչ հանգստի,
 այ չար աղվես: քեզ մի շարդի,
 — Կոպիտ, անտաշ, մինչև վոր յես
 բռի, թերմաշ, գործս ավարտեմ,
 զմեր ես — մոլը ես... դես-դեն ընկնեմ,
 յերկու աչքով քո ձագերի
 հաստատ կույր ես... տեղը գտնեմ:
 Պապական մենք՝ Վայ, վայ, արջի
 կողովագործ ձագը կորչի...
 վարպետներ ենք Ինձ, աղվեսիս,
 ամբողջ ցեղով: բա ամոթ չի...

4

Արջը նստեց արջավարի,
 ուստա աղվեսն ուստավարի
 արջի շուրջը ուռեր տնկեց
 և ուռերով կողով գործեց:
 Ուստեն դուրսը, արջը միջին՝
 գործը հասավ արջի դնչին:
 Կողովը գեռ կիսատ-պռատ,
 հովիվ ու շուն յերեք-չորս հատ
 վրա տվին ուռե բերդին,
 վեր գցեցին արջին լերդին...

Կոպալտեցին
 բըղբկաեցին,
 կողովն առան
 հալածեցին:

Արջը հուզված,
 սաստիկ գողված,
 լնդին-լնգին,
 կոպալ գունչը
 ծնկին-ծնկին,
 փախավ գնաց

սարը հասավ,
 սարիցն տասվ.
 — Աղվես, աղվես,
 դետինն անցնես քո ցեղովը,
 գլխիդ կաշի քո կողովը,
 բուրդս գլեց շան ժողովը:

62. Արտուտի յերգը

Քեզ յեմ գովում
 ծաղիկի գարուն,
 ալ ու ալվան
 ծաղիկ սիրուն:
 Քո սեղանը
 անհատների
 իմ ձագերին
 կեր ե տալիս:
 Իմ ձագերը
 բնիդ միջին,
 ձագս ել, բունս ել
 ծոցիդ միջին,
 քեզ եմ գովում,
 ծաղիկ գարուն,
 ալ ու ալվան
 ծաղիկ սիրուն:

63. Շողիկի յերագը

— Ա՛խ, մայրիկ, ինչքան լավն ե արևը, ի՞նչ կը լինի
 առավոտը վաղ գարթնեցնես, տեսնեմ ինչպես ե դուրս գա-
 լիս նա:

— Լավ, Շողիկս, կը գարթնեցնեմ, — ասավ մայրիկը, —
 հիմա քնիր:

Գիշերը Շողիկը յերագում լսեց, թխկացնում են լու-
 սամուտը, — թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ:

— Ո՞վ ես, — հարցրեց Շողիկը յերագում:

— Առավոտվա հավիկն եմ, շուտով արևը դուրս կգա,
 տես չըքնես մնաս:

— Բղեղներ ենք, յեկել ենք ասելու, վոր արևը շուտով
 դուրս կըգա. տես չըքնես՝ մնաս:

Քիչ հետո ել լսեց մի անուշ ծըվըրոց:

— Շողիկ, յես արտուտիկն եմ, հեռվից տեսա արևի
 շողերը, յեկա քեզ իմաց տամ:

Շողիկը շուռ ու մուռ յեկավ ու ասավ.

Թող արևը քիչ սպասի, բունս տանում ե:

Արտուտը վոր գնաց, կեռասենու ճյուղերը լուսամուտից մտան Շողիկի ննջարանն ու ասացին.

— Շողիկ, տես ինչպիսի կարմիր կեռասներ ե տվել մեզ արևը. գարթիր, առ, բեզ ենք բաշխում:

Շողիկը հենց վոր ուզեց ձեռքը մեկնի, մեկ ել մի տաք բան կպավ նրա թշերին:

— Բարև աղունիկս, տես, դու չեկար, յես յեկա. վեր կաց, վեր, յես կարմիր արևն եմ:

Շողիկը բացեց աչքերն ու ասավ.

— Վայ, մայրիկ, քնել-մնացել եմ, ինչո՞ւ դու ինձ չքարթեցրիր. տես, արևն յեկավ գարթեցրեց:

Չեզանից ո՞վ ե յերազ տեսել:

Ա. ռ. ա. ծ. — Սովածը յերազում հաց կը տեսնի, ծարավը՝ ջուր:

64. Ծառի հարսանիքը



Ծառիկները հարսնիք ունին
— Ճըզը՛ր—վըզը՛ր,
ճըզը՛ր—վըզը՛ր...
Ի՛նչ ղըժժոց ե կաղնի ծառին,

այգու պատին, կտրան ծերին,
տասը, քսան, հարյուր, հազար,
պար են գալիս, ել քանի պար:
Միրգ են բերել մերու ծառից,
կուտ են բերել ճամպաներից. —
գարի, կորեկ՝ հանդից, արտից՝
չարսն ասավ.


- Թմփլիկ ծիտիկ, ի՛նչ ես բերել:
- Մի հատ հաճար:
- Բմբլիկ ծիտիկ, ի՛նչ ես բերել:
- Կանաչ բանջար:
- Բա դո՞ւ, Պատիկ:
- Չիր ու չամիչ:
- Բա դո՞ւ, Չատիկ:
- Կորեկ մի բիչ:
- Բա դո՞ւ, Պատիկ սիրուն ծիտիկ:—

— Յես... մոռացա... բան չբերի:

«Թը՛ռռ, դե թոնք»,

ելի բերենք»:

Ինչո՞ւ ուրախ եր այս հարսանիքը:



65. Արջի ընտանիքը

Արու արջը ձմեռն իր վորջն ե մտնում մենակ: Մայր-արջը իր մոտ պահում ե իր տարեկան ձագերից մեկին, իսկ մյուսներին հեռացնում ե, վոր իրենց համար սեփական վորջեր չինեն: Մոր հետ վորջ մտած մի տարեկան ձագը դառնում ե իր նորածին յեղբայրների և քույրերի դայակը:

Փետրվարի վերջին կամ մարտի սկզբին արջը ձագեր ե բերում: Այդ ձագերը ծնվում են կույր և շատ փոքր. հաղիվ ե պատահում, վոր մկներից մեծ լինեն: Սկզբում մայր-արջը կերակրում ե նրանց միայն իր կաթով և թույլ չի տալիս նրանց վորջից դուրս գալու, իսկ յերբ իրեն համար կեր ճարելու յե գնում, դուրսը յերկար չի մնում: Յերբ նրա յերեխաները դառնում են մի ամսական կ նրանց աչ-նրա յերեխաները դառնում են մայրը սկսում ե նրանց դուրս բերել բերը բացվում են, մայրը սկսում ե նրանց դուրս բերել

զբոսանքի, և այդ զբոսանքները կրկնվում են շուա-շուա:
Յերկու ամսական արջուկներն արդեն իրենց մոր հետ գնում
են թեղուտ, նրանց կեղևը և մանր շիվերը կոծելու:

Մայիսին արդեն մայր-արջը իր ձագերից չի բաժան-
վում և նրանց իր հետ տանում է ամեն տեղ: Նրա հետ
ման է գալիս և անցած տարվա ձագ-դայակը: Առջևից գը-
նում է մայրը, նրա յեակից արջուկները, իսկ ամենից հե-
տո մի տարեկան ձագը: Մա, վորպես հոգատար դայակ,
հսկում է իր փոքր յեղբայրներին և քույրերին, անց է կաց-
նում նրանց զեռակներից ու ջրերից: Մայրը հետևում է,
փոր նա լավ նայի յերեսաներին, և պատժում է նրան, յե-
թե անփուլթ է գտնվում:

Ամբողջ ընտանիքը դանդաղ առաջ է շարժվում, հաճախ
կանգ է առնում, շուա են տալիս ձամպին պատահած ամեն
մի բար ու ճյուղ: Մայրը սովորեցնում է յերեսաներին
թե ինչպես պետք է բռնել փոքրիկ կենդանիներ. ցույց է
ե տալիս, թե փորտեղ են աճում պտուղները, ինչպես գըտ-
նել մրջյուններ և մրջնանոց:

Մարդ տեսնելիս մայր-արջը ուղիղ գնում է դեպի նա,
իսկ արջուկները մի տարեկան ձագի հետ բարձրանում են
ծառերը:

Աշնանը արջուկները դառնում են մեծ շան չափ, իսկ
կատարյալ հասակի հասնում են վեց տարեկան ժամանակ:

Արջերն ապրում են մինչև 50 տարի:

Իսկ մարդիկ ինչպես են դաստիարակում իրենց յերեսաներին:

66. Ույունք

Գարունը յեկավ ամպերով,
ամպերը յեկան անձրևով.
անձրևը տանեմ սրբին տամ,
արար ինձի ցորեն տա.
ցորենը տանեմ շաղպին տամ,
շաղպն ինձի ալյուր տա,
ալյուր տանեմ տաշտին տամ,
տաշտը ինձի խմոր տա.
խմորը տանեմ թոնրին տամ,
թոնիրն ինձի հաց տա,
հացը տանեմ չարչուն տամ,

չարչին ինձ ուլունք տա.
ուլունքը տանեմ նանխ տամ,
նանս ուլունքը շարի,
իմ վզիցը կախ անի:

67. Ճոխկը

Հեխյան

1

Թռչկոտում եր ճոխկը, թռչկոտում եր ծաղկից ծաղիկ,
խոտից խոտ ու ճոխկ, ճոխկ, ճրոճրոտում:

Անմեղ աղջիկ եր,

ծաղկի փնջիկ եր,

սիրան եր խոսում,

յերգ եր ասում:

Մի որ ճոխկը մի արծաթ շահանոց գտավ ու ճոխկ,
ճոխկ, ճրոճրոտաց:

Ո՛յ, ո՛յ, ո՛յ, ես ինչ բախտ ե, ես ինչ գանձ ե, ես փո-
ղով յես ինչ գնեմ:

Կապուտակ ձի առնեմ, հեծնեմ-թռչեմ: Չե, չե, ինչ-
պես ջրեմ, ինչպես կերակրեմ:

Գորգ առնեմ, տակս փռեմ: Չե, չե, ինչպես մաքրեմ,
ինչպես թափ տամ: Չե, լավս ե՛ կարմիր ժապավեն առ-
նեմ,—ասավ ճոխկն ու առավ:

Առավ, կապեց կարմիր ժապավենը, զուգվեց, զարդար-
վեց, նստեց տան շեմքին, իրեն ցույց տվեց:

2

Յեկավ Յեզիկը, տեսավ ճոխկին.—

—Բարև քեզ, ճոխկ,

նազելի աղջիկ,

յեկ ընկերանանք,

ընկերներ դառնանք:

Յես Յեզիկն եմ, հեզիկն եմ, պեծիկ, մեծիկ մազիկն եմ:
Ճոխկն ասավ.

—Յես ել ճոխկն եմ...

սիրուն աղջիկ եմ,

վարդի փնջիկ եմ

վոսկեզոծ մազիկ,

կարասի վզիկ,

մի բուռ կրակ եմ,

մութ տան ճրագ եմ:

իմ սիրան ե խոսում,

յես յերգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտա մի շահի, ժապավեն առա ու պե-
ծիկ դառա. նա յե ընկերս, ով յերգել գիտե:

Յեզիկը յերգեց բառաչելով.

— Մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ...

Յես Յեզիկն եմ, հեզիկն եմ,
պեծիկ-մեծիկ մազիկն եմ:

— Ե՛, լավ, լավ,

Յեզիկ, հեզիկ,

պեծիկ մազիկ,

գնա մի բան չես,

հերիք բառաչես:

3

Յեզիկը գնաց, Փիսիկը յեկավ: Յեկավ ու ասավ.

— Բարև քեզ, Ճո՛րիկ,

նազելի աղջիկ,

յեկ ընկերանանք,

ընկերներ դառնանք:

Յես մլավան Փիսիկն եմ, խուճուճ-մուճուճ մազիկն
եմ, աղաների մուշտակն եմ, խանուճների չուստակն եմ:

Ճո՛րիկն ասավ. — Յես ել Ճո՛րիկն եմ,

սիրուն աղջիկ եմ,

վարդի փնջիկ եմ.

վոսկեզոծ մազիկ,

կարապի վզիկ,

մի բուռ կրակ եմ,

մուժ տան ճրագ եմ:

Իմ սիրտն ե խոսում,

յես յերգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտա մի շահի, ժապավեն առա ու պե-
ծիկ դառա. նա յե ընկերս, ով յերգել գիտե:

Փիսիկը յերգեց մլավելով. — Յես մումուան Փիսիկն եմ,
խուճուճ-մուճուճ մազիկն եմ...

— Ե, լավ, լավ, Փիսիկ,

դու, լավը՝ լավն ես,

բայց շատ լավ կանես.

վոր չը մլավես:

4

Փիսիկը գնաց, Մկնիկը յեկավ:

Մկնիկը յեկավ, բեխերը սրած ու վերև ծռած, մուշտա-

կը հագին, վորրած ազին, աչք ե ման ածում, պոռը կծում:

Յեկավ ու ասավ. — Բարև պայծառիկ,

ճրճուճ ճո՛րիկ,

նազանի աղջիկ,

ալ վարդի փնջիկ,

յեկ ընկերանանք:

Ընկերներ դառնանք:

Յես Մկնիկն եմ, Մկնիկն եմ, դաշտի վոսկի ձկնիկն եմ:

Ճո՛րիկն ասավ. — Յես ել Ճո՛րիկն եմ,

սիրուն աղջիկ եմ,

վարդի փնջիկ եմ,

վոսկեզոծ մազիկ,

կարապի վզիկ,

մի բուռ կրակ եմ,

մուժ տան ճրագ եմ:

Իմ սիրտն ե խոսում,

յես յերգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտա մի շահի, ժապավեն առա ու պե-
ծիկ դառա. նա յե ընկերս, ով յերգել գիտե:

Մկնիկն յերգեց ծրվծրվալով. — Յես Մկնիկն եմ, Մկնիկն եմ,

դաշտի շեկիկ ձկնիկն եմ:

— Ե, լավ, լավ, Մկնիկ,

դու լավ ես յերգում,

ձենդ լսեցի,

քեզ շատ սիրեցի:

Յեկ ընկերանանք,

ընկերներ դառնանք:

Ճո՛րիկի բախտը չը բերեց. ճիշտ ե, Մկնիկը լավ եր յեր-
գում, բայց տանը չեր մնում, վոր յերգեր, Ճո՛րիկը լսեր:

Շարունակ դուրսն եր. ինչ վոր գտնում եր, մենակ եր
ուտում:

Մի անգամ Մկնիկը տուն յեկավ, տեսավ վոր Ճո՛րիկի
ընկերուհիները հյուր են յեկել: Շատ քաղցած եր. դես ու
դեն ընկավ, վոր մի բան ճանկի: Բարձրացավ կճուճի վրա
ու ընկավ տաք սպասի մեջ: Ընկավ ու մեռավ:

Ճո՛րիկը քիչ մնաց խելագարվի. նստեց ու լաց յեղավ
ընկերոջ համար.

— Ի՞նչ եմ անում վոսկի մազիկ,

վոսկի մազիկ, յերկար վզիկ:

Թո՛ղ յես շաղվեմ հում կաթի պես,

սիրտս սենա սև սաթի պես,

զարգս ծորե ճոխկ-ճոխկ:
Ա՛խ, Մուկիկ ջան, վաղամեռիկ,
ձենդ անուշ, մազդ խուճուճ,
անտեր մնա ես խոր կճուճ,
վոր քեզ չաներ ճստիկ-վստիկ,
այ իմ ընկեր, պստիկ-մստիկ:

Ու մինչև այսոր ճոխկը ճոճուայով լայխ ե ընկեր
Մուկիկի մահր:

68. Գիշեր

| | |
|--|---|
| Իջնում ե գիշեր սարերի ուսին, փայլում ե վերից կաթնագույն լուսին: | Լուիկ ու մեջիկ կապույտ յերկնքով անցնում են ամպեր անվերջ շղթայով: |
|--|---|

Վերից նայում ե
յերկինքը ուրախ,
քնած ե գյուղը
անհոգ ու խաղաղ:

69. Ճնճողուկներ

Կոտ ու կես կերեկ ունեմ ցանելու համար,
ճնճողուկներ թռան յեկան ուտելու համար,
կռացա քար վեր առա զարկելու համար,
Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,
աղջիկներ թե քաշեցին փետելու համար,
պառավներ պղինձ գրին յեփելու համար,
Դուռ-զրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
տերտերներ խաչով յեկան որհնելու համար,
աշուղներ սազով յեկան գովելու համար:

Ա՛յ ճնկողուկիկ,
կարմիր տոտիկ,
սիպտակ փորիկ,
ուտեն կուտիկ,
խմեն ջրիկ

առվի յեզրիկ,
պստիկ-մստիկ
փախչեն յերթան մանգալու համար:

Քար վոր վերկալա, քանի՞ ճնճողուկ զարկեցի:
Այնքան մարդ ի՞նչ պիտի մորթեյին ուտեյին:

70. Տերեվներ

1

— Մենք ծառերի զարդն ու զարդարանքն ենք,—ասացին
տերեվները.— առանց մեզ ինչի՞ նման կըլինին ծառերը. մենք
սիրուն ենք, կանաչ ենք. մեր ստվերի մեջ մարդիկ, կենդա-
նիները հանգիստ են առնում. մեր ստվերի մեջ ամեն մի
թռչուն իր բունն ե շինում, իր բունն ե շինում, ուրախ
յերգ յերգում:

Մենք ենք ծառերին կյանք տվողը, զարդն ու զարդա-
րանքը:

2

— Ինչ ել վոր ասեր, իրավունք ունեք,—ասացին արմատ-
ները.— մենք ձեզ խնդրում ենք, միայն քիչ ներքև նայեցեք
և դուք կրտեսներ, թե մենք ինչ բան ենք, ձեզ ինչ ենք տա-
լիս: Աշնան վերջին դուք կըթափվեք, ձեզանից հետո յեկող
տերեվներին մենք ելի կյանք կըտանք, կըպահենք, և այսպես
շատ-շատ տարիներ: Հիմա՞ յել կասեք, վոր միայն դուք եք
զարդն ու զարդարանքը ու կյանք տվողը:

71. Լորենի

Ուշ ե ծաղկում լորենին,
հոտավետ ե, հոտավետ,
բայց ինչ մեղր ե տալիս նա
մատդ կուտես մեղրի հետ:

72. Ճանճը, անի կճեպը յեյ կապի գունդը

Յեղել ե, չի յեղել... բայց շատ առաջ ե յեղել... Յեղել ե. չի յեղել մի ճանճ: Բայց ինչ ճանճ: Եղ ճանճը ճանճ ե յեղել, բայց շատ ուրիշ ճանճ ե յեղել: Հիմի դուք կասեք — ճանճն ինչ ե, վոր ճեռնն ինչ լինի:

Եղ հո եղպես ե, բայց եղ ճանճը շատ ուրիշ ճանճ ե յեղել:

Վոտը չի ծալել, տանը չի նստել: Սար, ձոր, դաշտ թեև տակ ե առել: Հովիվներին դարի-դարի լացացրել ե: Սարերից հոտերով վոշխար ե բերել, դաշտերից յերամակներով ձի:

Թեև նրա բերած վորսը մարդ չէր տեսել, բայց քաջության մասին շատ բան եյին լսել: Ինքն ել հո՛ իրան գովելով ման եր գալիս: Իե, հիմի ասեք՝ ճանճն ինչ ե, վոր ճեռնն ինչ լինի: Այ, շատի, վոր յեղել ե չի յեղել այսպիսի մի ճանճ ե յեղել:

Բայց արի տես, այդ ճանճը մի կողմից անբախտ ե յեղել:

— Վոր կողմից, աջ կողմից, թե ձախ կողմից:

— Հա, դուք եղպես եք հասկանում: Վնչ, վնչ, ծուռը չը հասկանաք. են կողմից ե ամբախտ յեղել, վոր հավատարիմ ընկեր չի ունեցել:

Մի արևոր ճանճը նստած ե լինում ճամպի բարին:

Մին ել, ըհը, յերկու ճամպորդ— Չվի կճեպը և Կավի գունդը:

— Բարի որ, ճանճ, սարերի տեր:

— Ասածու բարին, համեցեք բարին, ջիվան-Չահելներ:

— Չվի կճեպ, Կավի գունդ:

— Մեր ականջն ե հասել, ճանճ ախպեր, վոր դու քաջ և հավատարիմ ընկեր կուզես, մեզ ընկեր արան մենք համ քաջ ենք, համ հավատարիմ:

— Շատ լավ, վոր եղպես ե, գնանք մի յերամակ ձի բերենք:

Ճամպա ընկան ու գնացին:

Շատ գնացին... քիչ գնացին... շատն ու քիչը ո՞վ գիտի, յես ել ենտեղ չեյի, վոր շատն ու քիչը իմանայի, գնացին ու մի գետի գեմ առան: Գետն եր ենքանն մեծ եր, վոր մի կոտրած դաշտի միջով եր վազում:

Ճանճը, գիտեք հո ինչ ճանճ եր, թուավ մի ափից մյուսը:

Չվի կճեպը Կավի գունդը շալակեց և մտամ գետը: Կես ճամպին գնդի աչքերը շուրը տարավ,

— Ի՞նչպես թե գնդի աչքերը շուրը տարավ. ե, դուք չը հասկանաք, թե Գնդի աչքերը յելան ընկան շուրը, և շուրը նրանց տարավ, վնչ, վնչ. այլ գլուխը պըտրտվեց: Կճեպի շալակին ծովեց, վոր ծովեց, կճեպի մեջ շուրը ցվեց և յերկուսով գնացին գետի տակը:

Կավի գունդը շրում բոլորովին լուծվեց: Ճանճը գետափին ենքան ծիծաղեց, ենքան հոհուաց, ենքան բորուաց, վոր ծիծաղից ճաքեց:

73. Կեչի ծառ

Կեչի, իմ կեչի,
Իմ սիպտակ կեչի,
գանգրահեր կեչի.
Կանգնել ես, կեչի,
դալար հովտի մեջ,
կեչի, քեզ վրա
տերևներ կանաչ,
կեչի, քո տակի
խոտը աբրեշում.
քո շուրջը, կեչի,
սիրուն աղջիկները
Չան գյուլում են ասում,
քո տակը, կեչի,
սիրուն աղջիկները
սպակներ են հյուսում:



74. Շունն ու ձին

(Առակ)

Մի տան բակում շունն ու ձին իրար առան առանձին:



Շունը ձիուն թե՛ «գլխիդ ձյուն, ինչ մեծ բան ես... բեռ կըտանես, արտ կըցանես. ձի, ձի, խնոցի, լծի, հեծի»

մեծ ջուրն անցի,
 տուր դեն գցի:
 Ե՛, Թող կորչի աննշանը...
 այ ինչ ասեմ ինձ պես շանը...
 յես ցերեկը տունը պահեմ,
 յես գիշերը հոտին նայեմ,
 ձին վոտ մեկնի ինձ հավասար»:
 Ձին Թե՛ «ճիշտ ե, հաչան Բասար,
 յես վոր հանգիստ
 կողքիս պտուկեմ,
 բեռ չտանեմ,
 դաշտ չհերկեմ,
 տուն կըլինի՛,
 վոր դու պահես,
 հոտ կըլինի՛,
 վոր դու նայես»:



75. Կանաչի՛ր, այգի

Կանաչի՛ր, կանաչի՛ր,
 իմ սիրուն այգի,
 կանաչ ու կարմիր,
 խոտ շորեր հագի:
 Գարունն ու հավքեր
 յեկան քեզ համար,
 կանաչի՛ր, այգի,
 անշուք մի մնար:
 կանաչն ու կարմիր
 նշան են կյանքի-
 դարունդ ե յեկել,
 կանաչի՛ր, այգի»:

76. Ուռեկի

Սիրուն ուռեկի,
 կանաչ ուռեկի,
 գլուխդ կախ-կախ՝
 ինչո՞ւ չես ուրախ»:

Արևն ե վառել,
 սիրտդ ծարավել,
 վոր եղբան ջահել



գլխիկդ ես ծոել,
 վշտոտ ես դառել
 ծնկիդ ես խփում,
 արցունք ես թափում»:

77. Գյուղացին ու արջը

1

Գյուղացին իր բոստանում
 դարնանը սերմ եր ցանում:
 Արջը յեկավ. «Բարև քեզ,
 ինչ ես անում քեզ ու քեզ.
 արի, այ մարդ, միանանք,
 մեկտեղ անենք վար ու ցանք.
 վար ու ցանքը մեր կիսրար,
 հունձն ել անենք հավասար»:

Աչքիս վրա, արջ ապեր,
 ոտար խոմ չենք. կուզես, բեր
 հենց առաջին անգամը,
 ցանենք մոտիս շաղգամը:
 ինձ արմատը հողումը,
 քեզ փրբերն ու ցողունը»:



Քաղցր ու խոշոր շաղգամը
հողում տոզեց աշնանը:
Մեր ապերն ու գյուղացին
շաղգամն հողից հանեցին:
Ապերն առավ փրերը,
արմատներն ել ընկերը:
Արջը տեսավ, վոր խաբվեց,
մարդու դեմը քիչ լարվեց:

«Վայ, ինձ խաբե գյուղացին.
կաց են մյուս ցանոցին,
ինչ վոր ցանենք հողումը,
նրան կտանք ցողունը»:

Մյուս տարի ցանոցին
արջին առավ գյուղացին.
— Ապեր, արի մենք ելի
մի բան ցանենք կիսովի:

Արջը թե՛ հայ, շատ բարի,
միայն անշուշտ ես տարի
ինձ արմատը հողումը,
քեզ փրերն ու ցողունը:
Համաձայն եմ յես նորեն,
ես հետ ցանենք մենք ցորեն:
Մարդը գիտեր իր բանը.
ապոր հետ՝ իր տանը
ցորենն ածեց տոպրակը,
ավեց նրա շալակը.
ու ցանեցին են արտը
բրդոտ ապերն ու մարդը:



Ընկերները հունիսին
արտն հնձեցին միասին:
Հասկերն ընկան գյուղացուն,
արմատն ընկավ սարեցուն.
արջը ել չըհամբերեց,
եղտեղ մի լավ փրփրեց.
սաստիկ սաստիկ նեղացավ:
թքեց, մարդուց հեռացավ:
Ու են որից մինչև հիմի
արջն մարդուն թշնամի:



Նապաստակն ու աղվեսը

Ծուռ աչք շրթի.
Պոչ ել չունի,
Սրան մտիկ:

Նապաստակն ու արջը

Նապաստակն իրանն առավ,
Տունը թողեց ու դուրս թռավ
Յետ չնայեց, վազեց, լացեց,
Քեռուն գտավ, ցավը պատմեց.
— Այ իմ քեռի, այ արջախաբեր,
են աղվեսը՝ չար սրտամեռ,
Փայտե տունս ձեռքես առավ,
Դուռը փակեց իրանն արավ:
— Քրոջ վորդի, ե, ամոթ չե՛,
Վոր դու կուլաս, քեռիդ սող
չե՛:

Անտառի մեջ բարձր տեղում,
Վորտեղ քամին պար եր խա-
ղում,
Նապաստակը բուն եր շինել
Ու աղվեսին ընկեր յեղել:
Տուն եր շինել, այն ել փայ-
տից,
Պաշտպանվում եր տաքից-ցըր-
տից:
Աղվեսինը թեև լայն եր,
Թեև յերկու աչքանի յեր,
Բայց շատ ցուրտ եր՝ վողջը
ձյունից:

Մի որ յեկավ հախուցը,
Տունը առավ կաթկթոցը,
Դեռ չը հասած մարտի կեսը,
Սնտուն մնաց մեր աղվեսը:
— Վտոդ պաչեմ, այ Շահգադե
Ցրաի ձերքից ինձ ազատե,
Մի անկյուն տուր տանդ մի-
ջին,

Ծառա արա քո առաջին:
«Լավ, ներս արի դրկից աղվես,
Բայց խնդրում յեմ ինձ հետ
վարվես,
կռիվ, ուշունց յես չեմ սիրում,
չին բաներն ել չեմ քրքրում»,
Ու աղվեսը մտավ տունը,
ձաշը կերավ, առավ քունը:
Քնից զարթնեց, դես դեն նա-
յեց,

Տան տիրոջը, խիստ հայհոյեց.
— Այ վայր տամ եդ քո գլխին.
Դու տան տերը, յես աղախին.
Տան մեծ մասը քեզի պեսին,
Դուան տակը խան աղվեսին:
Դեհ, շուտ կորի,

Արի գնանք, յես են փչին
Մի լավ դաս տամ տանը
միջին:
Սրտոտ քեռին դուռը ծեծեց
Ու աղվեսին հերսոտ կանչեց.
— Տո փուչ աղվես, սասավ,
ինչո՛ւ
Ես իմ վորքիկ քրոջ մանչու
Փայտե տանը տեր ես դառել
Ու իրան ել դուրս ես արել:
— Լավ եմ արել,
Տեր եմ դառել.

Ու աղվեսը դուան ծակից
Վառարանի թեժ կրակից
Բերեց, ցանեց արջի վրան,
Մի լավ խանձեց դունչն ու
բերան:
Փախավ արջը դուչն այրած,
Քրոջ վորդին հետը առած:
Նապաստակն ու գայլը

Անտուն, անտեր նապաստակը
Գնաց, նստեց ծառի տակը,

Մաղիկ մաղի մղկատալով,
 Ցափն եր պատմում բարձր
 լալով.
 Լացը լսեց գայլը դանդաղ,
 Յեկավ ասաց. «Այ քեզ
 մատաղ
 Ինչի՞ կուլաս մաղիկ, մաղիկ,
 Կտրատելով սիրտ ու աղիք»:
 — Ե՛, գայլ յեղբայր, բանս
 բուրդ ե,
 Վրես բարակ, որը ցուրտ ե:
 Են աղվեսին թող չմնա...
 Գնանք, ցուլց տուր են
 աղվեսին.
 Գայլ, նապաստակ ընկան
 ճամբալ,
 Յեկան, յեկան, մին ել ահա
 Հասան,
 Տեսան
 Մի վառ կրակ
 Վրան կաթսան:
 Ծեր աղվեսը գոգնոցն հագին,
 Վրեն մաքուր արգին-կարգին,
 Դունդունալով ճաշ եր յեփում,
 Շերեփով խառնում, քյափը
 թափում,
 Կերակուրը յուղոտ-սոխոտ,
 Հոտ եր բերում, մի անուշ
 հոտ,
 Վոր ծեր գայլին կալեց,
 կապեց,
 Ախորժակը խիստ զրգռեց:
 — Կորիր, քաֆթան,
 Սև ցավը քեզ,
 Նապաստակի պաշտպանին տես:
 — Մի բարկանա, պարոն աղվես,
 Քո ցեղակից գայլիկն եմ յես.
 Նապաստակի հետ ի՞նչ ունեմ,
 Յեկա քեզ մոտ, վոր ճաշ անեմ:
 — Քիչ սպասի, ճաշը հասնի,
 Խողորմ մի գաս, տակը փչես,

Գիտեմ, վոր դու հպարտ ել չես:
 Գայլը իսկույն կրակը փչեց,
 Ու աղվեսը կաթսան շրջեց,
 Հիմար գայլի գլուխը խաշեց:
 Գայլը սաստիկ ունաց, գոռաց,
 Պոչի վրա շատ ֆըռֆըռաց,
 Գլխի ցավից յեկավ թռավ՝
 Մի չորս վոտ ել դեռ փոխ առավ,
 Հաղիվ իրեն գցեց տունը,
 Հիվանդ պառկեց սաղ գարունը:

Նապաստակն ու աքաղաղը


Անտուն անտեր նապաստակը
 Դարձյալ յեկավ ծառի տակը.
 Մաղիկ-մաղիկ մղկատալով,
 Ցափն եր պատմում
 Բարձր լալով.
 «Ինձ լավ խաբեց կեղծավորը,
 Դուրսը թողեց եսպես որը.
 Անտուն, անտեր յես ի՞նչ անեմ,
 Մի բուն չկա միջին քնեմ»:
 Ջայնը լսեց աքաղաղը,
 իսկույն թողեց իրա խաղը,
 Վազեց՝ յեկավ ծառի տակը,
 Վորտեղ կուլար նապաստակը:
 — Ինչի՞ կուլաս, այ իմ շըլըիկ,
 Մի լար, մի լար, չարդ տանեմ.
 Պատճառն ասա, մի ճար անեմ:
 Նապաստակը աքաղաղին
 Պատմեց յեղածն իրա տեղին:
 — Վոր եղպես ե,
 Մի սպասե,
 Ել մի տղա,
 Քիչ վզա,
 Մժեղի պես նրան կտցեմ
 Աղվեսն ինչ ե՞ հետը մրցեմ:
 Մութը մութին,
 Ժամը ութին
 Արագ, արագ
 Առանց ճըրտպ

Հերոսները
 տունը հասան
 Ու անասան
 Քաջը գոչեց ձայնը փոխած,
 Ալ արյունը աչքը փոխած.
 — Յես վոչ արջն եմ, վոչ ել
 գայլը,
 Աշխարհք կառնե շորիս փայլը:
 Յես իշխանն եմ Մեծ Վարդերես,
 Մուր եմ կախել հինգ գաղ ու կես:
 Ել չի պրծնի գող աղվեսը,
 Թե վոր գանեմ նրան ներսը:

— Այ, ես ո՞վ ե Վարդերեսը:
 Դուռը բացեց խան աղվեսը
 Ու են մթնով
 Դիպավ գետնով,
 Լեղապատառ
 Ընկավ անտառ:
 Աքաղաղն ու նապաստակը,
 Վոր քաշում եր տան փափազը,
 Տուններս մտան, սեղան նստան,
 Հաշտ ու բարիշ լավ ընթրեցին
 Ու եղպես ել միշտ ապրեցին:

79. Կոռնկն ու աղվեսը

Աղվեսն ու կոռնկն ընկերացան: Կոռնկը բուն շինեց,
 ձու ածեց, թուխս նստեց, ձագ հանեց:
 Աղվեսն ել ձագեր ունեցավ, մայր դարձավ: Մի որ
 կոռնկը դուրս գնաց ձագերին կեր բերելու:
 Տնպահ աղվեսը բունեց կոռնկի մի ձագը, վիզն ոլո-
 րեց, անուշ արավ, փոսկոտով կերավ, տեղը բան չթողեց:
 Տուն յեկավ կոռնկը և ինչ տեսավ:
 Աղվեսը լալիս ե ու լալիս, իրան բըբըում ու լալով
 ասում.



— Կոռնկ քուրիկ, այսպես ել անբախտություն...
 — Ի՞նչ անբախտություն ե, ի՞նչ ե պատահել, աղվես
 բուրիկ:
 — Բա չես ասի, մեր բալիկը չկա ու չկա: Այնքան
 ման յեկա, այնքան ման յեկա՝ չկա ու չկա:

- Ում բալիկը: Աչքս կուրանա,
- Մեր բալիկը, էլի: Փափկամազիկ,
- Ախր վոր բալիկը: Յերկար-վզիկ,
- Նա, նա: Յերկար-վոտիկ,

Յերկար-տոտիկ,
 Բարձրիկ-մարձրիկ,
 Չայնը քաղցրիկ...
 Հորոտ-մորոտ բալիկ...

Գովում եր աղվեսը, իրան բրբրում, աչքը խփում հագար թափում:

— Աղվես քուրիկ, ասում եկուունկը. դու ձագի տեր ես, դու սիրող մայր ես, արցունք մի թափի, արցունք մի չափի: Իա ել չար բախտից, դա ել իմ բախտից:

— Հա հա, հեկեկում ե աղվեսը, հա, կուունկ քուրիկ հա, անուշ քուրիկ, լացը չի ոգնի, անցածն անցած ե:

2

Յերկորդ որը կուունկն ելի գնում ե ձագին կեր բերելու:

Տնպահ աղվեսը ելի բռնում ե կուունկի մյուս ձագին, վիզն վոլորում ու անուշ անում, վոսկոտով ուտում, տեղը բան չի թողնում:

Տուն ե գալիս կուունկը և ինչ տեսնում:

Աղվեսը յերեկվանից ավերի գառն ե լալիս, աչքը խրփում հագար թափում, իրան բրբրում ու լալով ասում.

- Ախր կուունկ քուրիկ, Փուլ գա իր հիմքով,
- Քուրիկ ու մերիկ, Լիքնե չարիքով,
- Իմ աչքը դուրս գա, Փափկամազիկ,
- Աչխարհը փուլ գա, Յերկար վզիկ,

Յերկար-տոտիկ,
 Բարձրիկ-մարձրիկ...



Չայնը քաղցրիկ...

Հորոտ-մորոտ բալիկ ել չկա:

Կուունկն այս անգամ հասկանում ե, վոր ձագերին ուտողը քուրիկ աղվեսն ե, բայց իրան չհասկացողի տեղ ե գնում ու ասում.

Աղվես քուրիկ, քուրիկ, մերիկ,
 Իու ձագի տեր ես, դու սիրող մեր ես,
 Կաթի կը ցամբի, կուրծքդ կը սմբի,
 Արցունք մի թափի, արցունք մի չափի:
 Իա ել չար բախտից, դա ել իմ բախտից,

— Իու ճիշտ ես ասում, այ կուունկ քուրիկ. չար բախտի ձեռքից ում գնանք գանգատ, հեկեկում եր աղվեսը ու բիթի տակ ծիծաղում կուունկի վրա:

3

Աղվես քուրիկ, մի որ ասում ե կուունկը, իմ ձագերը կորան, տանողի աչքը դուրս գա, բո ձագերն ել մեծացան, իրենց գլուխը կրպահեն: Արի գնանք ձեռք ձեռքի տանք, բրոջ նման ման գանք, սրտերս բանանք:

— Ե, ուր գնանք, կուունկ քուրիկ, անուշ քուրիկ:

— Այ, հենց կուզես յերկինք թռչենք, տեսնենք վերև ինչ կա:

— Ի՞նչ ես ասում քուրիկ, ծիծաղեց աղվեսը, ի՞նչպես կարող եմ բեզ հետ թռչել, յես թե չունեմ, բեզ պես բախտավոր չեմ:

— Ե, ի՞նչ անենք, վոր չունիս, յես հո ունե՞մ, ել ի՞նչ քույրեր ենք, վոր իրար չոգնենք: Նստիր ինձ վրա, միասին թռչենք:

Աղվեսն ինքն իրան մտածում ե. «Ի՞նչ լավ յեղավ, կը գնանք յերկինք, պատահած թռչունը կը խեղդեմ, վեր կածեմ գետին, յես գալիս ել քուրիկիս ափ ու խափ կանեմ. հ՞ը, սրանից ել լավ բան»:

Աղվեսը նստում ե կուունկի վրա:

Կուունկը թափահարում ե թևերը, վեր բարձրանում, գնում ե գնում, հասնում ե յերկինքի յոթը հարկը ու հանկարծ շուռ ե գալիս ողում:

Աղվեսը հանկարծ մեջքի վրա դրը՛խկ, ընկնում ե գետին և իրան շարդում:

— Աղվես քուրիկ, ցած գալով ասում ե կուունկը, այդ ել բո բախտից, այդ ել բո բախտից:



80. Անստ

Հացաբույսերը հասկեր չունեցին: Դեռ պտուղ չկար ծառերի վրա: Յեկավ ամառը, անցավ դաշտերով: Յորեն ու գարին, կորեկն ու հաճարը, վոր տեսան նրան՝ հասկեր բրունեցին, սերմով լցվեցին:

Փպտուն ամառը նայեց ծառերին, նայեց ու սասավ.

— Ծառեր, պտղեցեք ու պտուղ տվեք:

Ծիրանին տվավ կարմրաթուշ ծիրան, խնձորի ծառը՝ խնձոր մեղրածոր: Թուխն ու կեռասը, դեղձն ու խաղողը, տանձն ու սալորը, եսպես բոլորը ճիթ արին ծառից, ուրախ ժպտացին ամառվա դեմքին. ժպտացին, ասին.

— Ապրես դու, պտղատու ամառ:

Ուրիշ ի՞նչ հացահատիկներ ու պտուղներ կան:

Վորո՞նք են ամառվա ամիսները:

Ա մ ա ու. — Ամառվա փուշը, ձմեռվա նուշը:

81. Անստ

Սաստիկ շող ե,
ցորեն գարի
հասել են,
հնձվորները
խոտը քաղել
զիզել են:

Պտուղները
ծառի ճյուղից
ժպտալով,
ճիթ են անում
այգեպանին
հյուս տալով:

Ջան, ամառ ե, ամառ ե,

արևը խիստ կը վառե:

Ա ո ա ծ. — Ով ամառը կը քաշվի հովը՝ ձմեռը կը սասկիներա կովը.

Ա ս ե լ ու կ. — Գարի հաց՝ նանի թխած,

թրջի շուռ տուր, կակղի կուլ տուր:

82. Մայրը

Ինչքան լավն ե ամառվա պայծառ առավոտը: Խոտն ու ծաղիկ բուրում են իրենց անուշ հոտը: Կաքավը դուրս ե յեկել իրեն ձագերով, կղկղում ե ու սսում.—

— Յեկեք ձագուկներս, յեկեք մըջնոց գտա ձեզ համար: Ձագերն յեկան մոր ձենին, հավաքվեցին մըջնոցի շուռը, կացահարեցին մըջյուններին:

Մայր կաքավը գլուխը տնկած՝ հսկում եր, չը լինի մի փորձանք պատահի:

Հանկարծ լսեց մի ձայն... Մայրը նշան տվեց ձագերին ու ինքը թագնվեց խոտերի մեջ: Ձագուկները ցրվեցին կպան գետնին:

Վտանգն անցավ. նապաստակն եր, գնաց իր բանին:

— Կղակ-կա, կղակ-կա, ել վտանգ չըկա, — կղկղաց մայրը: Ձագուկները նորից հավաքվեցին:

— Ապրեք, լավ լսեցիք ինձ, միշտ այդպես արեք, վոր վտանգից ազատվեք, — սասավ մայրը ու շարունակեց իր բըջուջը:

83. Անստվա գիշեր

Սիրուն գիշեր...
լուսնի շողեր
պար են բռնել
ջրի հետ.
գետն ե հոսում,
որոր ասում,
փափսում ե
լուսնի հետ:

Մեղմիկ քամին
փարվում ջրին,
խաղ ե անում
գետի հետ:
Արծաթ ջրեր,
լուսնի շողեր
համբուրվում են
ափի հետ:

84. Գողունը յեւ հասկերը

Գյուղացին ցանեց հացահատիկներ: Դաշտը ծածկվեց թավիչ կանաչով: Հիանում է գյուղացին և ուրախանում, վոր կանաչը լավ է: Հպարտացավ կանաչը և մտքում ասում է.

— Կարելի չէ գյուղացուն յես շատ պետքական եմ:

Անցավ մի ժամանակ: Մատաղ կանաչից աճեց, բարձրացավ բարձր կանաչ ցողունը: Կրկին ուրախանում է գյուղացին և ասում. «Ես տարի հացը լավ կը լինի»: Հպարտանում է ցողունը, ավելի ու ավելի վեր է բաշվում և մտածում.

— Կարելի չէ գյուղացուն յես շատ պետքական եմ:

Անցավ մի ժամանակ, ավելի գեղեցկացավ ցողունը, վոսկու պես փայլում էր արևի տակ: Այժմ ավելի հպարտացավ ցողունը, միայն նա բարկանում է ծանր հասկերի վրա—ծռում են նրանք ցողունը գետնին, չեն թույլ տալիս, վոր սղիղ կանգնի:

Ի՞նչ է նայում գյուղացին, լավ կաներ կտրեր ես հասկերը,—մտածում էր նա:

Հնձեց գյուղացին հացը և ծեծեց: Հատիկը խնամքով աճեց ամբարը: Ծողունը դարձավ հարդ: Հարդը անասունների համար կեր արավ:

85. Հնձվորներ

Ահա յեկավ խոտ հարողը,
ուսին դրած գերանդին,
բոլոր խոտը սա հարել է,
բան չի թողել մեր հանդին:

— Այ խոտ հարող, աստ տեսնենք,
դու ի՞նչպես ես խոտ հարում,

— Այսպես ահա, լավ նայեցեք,
յես այսպես եմ խոտ հարում.

հեպ, հոպ,

հեպ, հոպ:

— Ա՛խ, ի՞նչ լավ է, յեկեք սովրենք,
Մենք ել այսպես խոտ հարենք.

հեպ, հոպ,

Ահա յեկավ արտ հնձողը,
ձեռքին փայտե մատնոցներ,
պատրաստել է սուր մանգաղը,
պետք է հնձե մեր արտեր.
— Հնձող յեղբայր, աստ տեսնենք,
դու ի՞նչպես ես հունձ անում.



— Այսպես ահա, լավ նայեցեք,
այսպես եմ հունձ անում.

հեպ, հոպ հեպ,

հեպ, հոպ, հեպ...

— Ա՛խ, ի՞նչ հեշտ է, յեկեք սովրենք,
Մենք ել այսպես հունձ անենք,

հեպ, հոպ, հեպ,

հեպ, հոպ, հեպ...

86. Թրքուրն ու խխուռնը

2

Կաղամբի կեղևի վրա ապրում էր մի խխուռնը:

Այդ տերևի մի անկյունում արդեն վաղուց ընկած էր մի գեղին հատիկ: Այդ հատիկը թիթեանիկի ձուլ էր:

Մի տաք որ ձվից դուրս սողաց մի փոքրիկ թրթուռ.
Խխուռնը զարմանքով նայում էր այդ նոր արարածին:

«Ի՞նչ չնչին, ի՞նչ վոդորմելի գատ է», մտածում էր նա:

Իսկ թրթուրը շատ ուրախ
եր: Նա սիրում էր տաք արևը,
իր կաղամբի տերևը ու յեր-
ջանիկ եր:

Մի որ խխունջը մոտ յե-
կավ ու պոզերը շարժելով ա-
սավ:



— Զարմանում եմ, ինչո՞ւ յես այդպես միշտ ուրախ:
Մեր կյանքը իսկի յել այդպես թեթև չե:

— Ինչո՞ւ,— պատասխանեց թրթուրը,— շատ լավ է: Շու-
տով ել մի սիրուն թիթեռ կը դառնամ, և կը թռչեմ վեր
արևի վոսկի շողերի տակ: Ախ, ի՞նչ լավ կը լինի:

Խխունջը յերեսը շուռ տվավ ու ծիծաղեց:

— Ի՞նչ հիմար բաներ է դուրս տալիս սա:


2

Քիչ հետո թրթուրի ուրախությունը կորավ: Թմրել
մնացել էր մի տեղում:

Մի անգամ խխունջը անց էր կենում նրա կողքից տե-
սավ, վոր թրթուրը փաթաթվել է մի տեսակ կաշվի մեջ ու
անշարժ ընկել:

— Այսպես ել հիմար,— բացականչեց խխունջը.— ասում
եր թիթեռնիկ թառնամ, տես՝ ընկել սատկել է:

Մի քանի ժամանակ ել անց կացավ, խխունջը բոլորու-
վին մոռացել էր իր հարևանին և ապրում էր, առաջվա պես
կաղամբի վրա: Մի որ ել անց էր կենում նրա գերեզմա-
նի մոտով ու հանկարծ գարմացած կանգ առավ: Թրթուրի
պատոված կաշվի մոտ
նստած էր մի սիրուն
թիթեռնիկ և նրա թա-
վիշ թևերը փայլում է-
յին արևի շողերի տակ:
— Մնաս բարով, խխունջ
ես գնում եմ,— կանչեց
թիթեռնիկը, թևերը թե-
թև թափ տվավ, բարձրացավ վեր ու կորավ արևի պայծառ
շողերի մեջ:



Խխունջը ինքն ի՞նչպես կը պատմեր այս ամենը:

Գրի՞ր ի՞նչպես հետզհետե դեղին հատիկը դարձավ թիթեռ:

87. Թռչունի մտածուկը

Յես ապրում եյի մի փոքրիկ տան մեջ
առատ ու անփուլթ:

աշխարհն ինձ համար կլոր էր անվերջ,
կեղևը կապույտ:

Նըրանից հետո աչքս բաց արի
մի փոքրիկ բընում:

ասի՝ աշխարհը հարդից է շինած
ու մայրս է շինում:

Մի որ ել բընից գլուխս հանած,
նայում եմ դես-դեն,

տեսնեմ՝ աշխարհը տերևից շինած՝
մեր բունը վըրեն:

Հիմի թռչում եմ հեռո՞ւ, շատ հեռո՞ւ,
ամեն տեղ գընում,

բայց թե աշխարհը ինչից է շինած,
ել չեմ հասկանում:

Շուտասե լուռի.— Մի տաշտ հով ճաթ, մի տաշտ տաք ճաթ,
մի տաշտ ճաքճըրոտած ճաթ:

88. Բուռի ձագերը



Մի անգամ բուն արծվին ազատեց
փորձանքից և արծիվը խոստացավ դրա փո-
խարեն նրան լավություն անել: Բուն ասավ.
«Վոչինչ չեմ ուզում— միայն անտառ գա-
լիս ձագերիս խնայիր, ձեռք մի տա՝ նրանք
լավն են, շատ լավը, սիրունիկ, անուշիկ
ձագեր են»:

Արծիվը թռավ անտառ. քաղցած էր: Շատ բների մո-
տեցավ, նայեց ամեն տեղ փոքրիկ սիրունիկ թռչունիկներ
եյին ծվծվում: Ձեռք չը տվեց: Քաղցած տուն էր թռչում:
Մեկ ել աչքովն ընկավ մի բուն, փորտեղ նստած էյին ան-
ձոռնի ագեղ ձուտեր՝ կեռ կտուցներով, չուած աչքերով,
գզգզված փետուրներով: «Այս անձոռնիկները բուռնը չեն
լինի» — մտածեց արծիվը ու վրա պրծավ, կերավ բոլորին:
Իու մի ասի՝ հենց սրանք էյին խեղճ բուռի ձագերը:
Ի՞նչ պիտի մտածեր բուն:

89. Մոծակի մանր

Յերկնուց խփեց հուր կայծակ,
 ընկավ կաղնուց մի մոծակ,
 մոծակն ընկավ կաղնու մոտ,
 թև ու թիկունքն արյունոտ:
 Ճանճերն յեկան վրդալուով,
 տըզտըզալով, բըզզալով,
 յեղբոր վրա շատ լացին,
 աղի արցունք մաղեցին.
 «Ազից ախպեր, քաջ մոծակ,
 ել չես թռչի թևարձակ.
 Ինչ, խավարի մեր լուսը,
 կոտորվել է քո ուսը.
 դու տանջվում ես չարաչար.
 ափսոս, չըկա վոչ մի ճար».
 Մոծակն իրեն հավաքեց,
 նվազ ձայնով կտակեց.
 «Իմ քույրիկներ աննման,
 փորեք դուք ինձ գերեզման,
 փորեք կանաչ պուրակում,
 վորտեղ դուք եք նվազում:
 Ամեն, ամեն իրիկուն,
 յերբ դուք գնաք դեպի տուն,
 իմ հորքուրներ, մորքուրներ,
 զբոսասեր քուրիկներ,
 անցեք, դարձեք իմ մոտով,
 ինձ հիշեցեք կարոտով»:
 Ճանճերն այդտեղ լաց յեղան.
 «Մեռավ, ասին, քաջ տղան.
 Վոչ թե չնչին մի ձագ եր,
 մոծակը—քաջ մոծակ եր»:

90. Վարդն ու յեղիկը

Վարդն ու յեղիկը պատահամաբ բուսել եյին միասին:
 Մի որ յեղինջն ասում է գեղեցիկ վարդին.
 — Նայիր, հարևանս, մեղուն եղ ի՞նչ է շուրջդ պտույտ
 գալիս. քեզ հանգստություն չի տալիս: Յես զարմանում
 եմ քո համբերության վրա: Դու ծաղիկների թագուհին լի-

նես, դու վշեր ունենաս ու թույլ տաս, վոր այդ հրեջջ
 շնչի քո բուրմունքը և հափշտակի քո հյուսթերը: «Յես նրան
 չեմ խանգարի,—պատասխանեց վարդը,—վորովհետև նա իմ
 հյուսթերից մեղր է շինում, մեղր»:

91. Կաղնու վարձվորները


Մեր ծեր կաղնին իր հին սունը
 տվել է չորս վարձվորի:
 Արմատի մոտ ներքնատունը
 մուկն է բռնել այս տարի:
 Ատաղձագործ փայտփորիկը
 ցածի հարկի խանութում
 անց է կացնում իր ուրիկը,
 թակում, կացում, ծակոտում:
 Իսկ վերևի հարկում տիտիկ
 շեկ սկյուռն է բնակվում,
 կաղին, ընկույզ, սերմ ու հատիկ
 դիզած իր լի փշակում:
 Թավ ճյուղքումը դրել է բուն
 մի զիլ յերգիչ դուրալի
 ու ճըլվում է որն ի բուն,
 իսկ վարձ վոչվոք չի տալի:

92. Անձոռնի ճուտիկը

1

Յերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի վրայից:
 Ճուտերը արդեն դուրս եյին յեկել, մնում էր միայն մի
 կանաչավուն փոքրիկ ձու:
 Վերջապես մի առավոտ թուխսը նկատեց, վոր ձվի ներ-
 սից մեկը թրխկթրխկացնում է: Իսկույն շարդեց ձուն
 կացով ու միջից դուրս յեկավ ճուտիկը:
 Սա նման չեր իր յեղբայրներին ու բույրերին: Ավելի
 բրդոտ էր, ավելի դեղին, տոտիկները կարճ-կարճ, գլուխը
 լայն, կտուցը տափակ:
 «Ես ի՞նչ անձոռնի յե», մտածեց մայրը, մի քիչ տըխ-
 րեց, բայց շուտով ինքն իրեն սիրտ տվավ, թե վոչինչ, կը
 մեծանա, կը գեղեցկանա:

Հավաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-հպարտ
կրթվալով գնաց բա-
կը: Փոքրիկները աշ-
խուժուարագ վազվը-
զում եյին նրա շուր-
ջը: միայն նորածինը
բայում եր ծանր ու
որորվելով:



2

Մայրը տարավ նը-
րանց առփի ափը բու-
ջուջ անելու: Անճոռ-
նի ճուտիկը շուրը
տեսավ թե չե՛ ընկավ մեջը:

Մայրը սարսափած ճշում եր, կանչում, թևերը թափ
տալիս, նետվում գեպի շուրը:

ճուտիկներն ել ծվում եյին, դես ու դեն ընկնում:

— Ոգնեցեք, յեղբայրիկը խեղդվում ե:

Ամբողջ բակը իրար անցավ. հավերը կըշկշացին, արլո-
րը բարձր ծղրտաց, փքված հնդկահամն ել ամուր զուտողու-
տում եր:

Իսկ անճոռնի ճուտիկը շարժում եր իր թաղանդավոր
թաթերը ու հանգիստ լող տալիս ջրի յերեսին:

Պառավ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղմուկը,
դուրս վազեց, տեսնի ինչ ե պատահել: Ու խփեց ծնկանը:

— Վայ, բոռանամ յես, ես ի՞նչ եմ արել. հավի տակ
բաղի ձու յեմ դրել:

93. Բկրիկ—ձկնիկը

Ձկնիկ, լոգ տուր, լոգ արա:

դրսի վորսը թո՛ղ արա,

իջի՛ր ջրի հատակը,

Մինչև անցնի վտանգը:

Տես, փորձանք կա քո գլխին,

մի լավ մտիկ յերեսին.

վորդ ե խրել սուր կարթին,

չը մոտենաս են վորդին:

Ինձ չը լսեց շեկիկը,
ինձ չը լսեց բկիկը,
հո՛ս, կուլ տվեց նա վորդը,
կարթը մնաց կոկորդը:

94. Չարչի Հակոն

Մեր չարչի Հակոն՝
աչքերը չալ-չալ,
կողքից մի խանչալ,
լծել ե մի ձի,
գնացել տանձի:
Բերել ե շատ տանձ,
չամիչ, փշատ, թուզ,
սուշուխ ու տխիլ,
չոր թուժ ու ընկուզ.
սայլը լիքն ապրանք,
ել չկա համրանք:
Ընկել ե փողոց,
կանչում ե տղոց:

1

«Ով չգա տանձի,
գլուխը խանձի.
ով չառնի չոր թուժ,
ուտի հավի կուտ.
ով չառնի տխիլ,
վոտը չի փոխիլ,
ով չառնի ընկուզ,
ման գա կուզե-կուզ.
ով չառնի թուզ-մուզ,
ուտի մի դմբուզ...
Չամիչը հատ-հատ,
սուշուզը մատ-մատ...
հասա Արտաշատ,
այ մատնափշատ,
ուտողը գիտե,
չուտողն ինչ գիտե.
այ բաղի-բուղի,
առնողը կուտի,
Հակոն բեժան ե.

սուք՝ եժան ե:
Թեթե ե վոտս,
շատ բան կա մոտս.
ուտելն արժան ե,
սուք՝ եժան ե:

2

«Տոներ են, տոներ,
աղջիկ-պարոններ,
ինչքան մաղ ունեք
ենքան նազ ունեք:
Ես ինչ լավ որ ե,
ապրանքս նոր ե,
բերել ե չարչին,
այ մեխակ, դարչին:
Մի կոպեկ վաստակ,
մաստակ, այ մաստակ,
ծամեք, ծամ տվեք,
բերնին համ տվեք,
եսպես լավ բաներ,
հուլունք, թիլ, ասեղ,
քորոց, զնդասեղ,
մատնոց, ճաղ, սանր,
ծախելն ե ծանր:
Ո՞ւր ե ձեր ազին.
գուլպա, ռեզին...
աղջիկ թոռան տեր,
ականջի գնդեր,
ակով մատանի—
ով գա՛ նա տանի.
լամն ե մի խոսքով,
գնացի Մոսկով,
առա մի վոսկով...»

«Հորքուր-մորքուրներ,
քուրիկ մուրիկներ,
յեղեն, ինչ յեղեն...
չիթ ու չթեղեն,
գույն գույն թաշկինակ,
այ դուք շեն մնաք...
Բարով վայելեք,
քանի ջահել եք,
հագեք, մաշեցեք,
լավ որ քաշեցեք.
մի ձու խաշեցեք,
հինգ որ ճաշեցեք:
Պանչում եմ հատ հատ,
այ հարուստ, աղքատ,
դանակ, գրչահատ,
պողպատե մկրատ,
կողպեք, բանալիք,
ինձ փող եք տալիք,
կոճակ ու չափրաստ
ձեզ համար պատրաստ.
շինել ե ինչլիզ,
հասել ե Թիֆլիզ,
մի լիքը վագոն
ծախում ե Հակոն:
Կովի տարի յե,
վերջը բարի յե,
ով վոր հույս ունի,
աչքալույս ունի.
ես լավ նշան ե,
առեք եժան ե:

«Ել ինչ եք ուզում.
ես ել ձեզ ուսում.
միրգը հո միրգ ե,—
ձեռինս ել գիրք ե.
պատկերով այբբեն,
ով չառնի՝ դմբեմ:
Այ փորթիկ տղա,
այ վոսկի ջղա,
այ դու, մողեսիկ

պարոն Պողոսիկ,
այ դու Աղասի,
հաց դնեմ՝ հասի,
բան դնեմ՝ փախի
մինչև Շամախի:
Այ դու չար Զավիկ,
գիժ կատվից լավիկ,
ջուր տամ եծերիդ,
լսիր մեծերիդ...
Այբբենի մինը
մի շահի գինը.
դե հասի, հասի,
ան գնա դասի,
տարին բոլորի,
մի բան սովորի,
գիրքը հո թան չե,
խմելու բան չե.
տեսար՝ դժար ե,
Հակոն հոժար ե,
տրորիք վոտով,
փաթաթիր խոտով,
աղ արա վրան,
տուր գոմշի բերան՝
թող գնա կորչի...
քեզ մի բուռ կոճի,
սաղ որը խաղա,
ուսումից կաղա»:

* *

Մեր չարչի Հակոն,
վոտները կարճ—կարճ,
փորը տկի խարճ,
աչքերը չալ չալ,
կողքից մի խանչալ,
մի ձեռքը սանձին
քաշում ե իր ձին
ու ձին ծանրաքայլ
քաշում ե մի սայլ:
Ինչով ե ծախել
մանրուկը չարչին...
ինչ ասես չըկա
ես սայլի միջին:

Յորեն ու գարի,
վարսակը ձիու,
բողկ, տակ, կարասիլի,
կթոցներով ձու...

Շեն մա գյուղը.
եսքան հավ ու ձուտ,
յուղ, պանիր, չորթան,
մի պարկ հավի կուտ:

95. Ծաղիկներ, տերեւներ յեւ պտուղներ

Այգում կար մի ծեր խնձորենի:
Յեկավ գարունը, բացվեցին նրա կոկոնները և խնձորե-
նին գարգարվեց քնքուշիկ տերևներով:
Տերևներն ասացին ծեր խնձորենուն.
«Մենք քո գարգարանքն ենք»:
Ժպտաց խնձորենին և ասավ.
—Կապրենք, կը տեսնենք:
Անցավ մի ժամանակ, խնձորենին ծածկվեց բաց վար-
դագույն ծաղիկներով: Թուփում են մեղունները ծաղիկների
շուրջը, համբուրում են նրանց: Ծաղիկները ուրախացնում
են նաև մարդկանց: Ծաղիկներն ասացին ծերուկ
խնձորենուն.
—Մենք քո գարգարանքն ենք:
Ժպտաց ծերուկ խնձորենին և ասավ.
—Կապրենք կը տեսնենք:
Յերկար կյանք չունեցան ծաղիկները. նրանք շուտով
թառամեցին և ընկան, իսկ նրանց տեղը յերևաց մի ազեղ
կանաչ գնդիկ, կոճակ. անցավ ամառը, յեկավ աշունը.
խնձորենու վրա դեղնած տերևների մեջ կարմրին տվին մեծ
վարդագույն խնձորենի:
Ահա իմ գարգարանքը,—ասավ խնձորենին. խնձորի
կուտ—կորիզից դուրս կըգան նոր խնձորի ծառեր և ինձ կը
փոխարինեն: Մարդիկ կըզովեն իմ հյուսթալի և քաղցը խըն-
ձորները, շնորհակալություն կասեն ծերուկ խնձորենուն:

96. Խրտվիչակ

Գյուղացին մի գարու արտ ուներ: Գարին հասել եր:
Ճնճղուկները ամեն կողմից հավաքվում են, ուտում
հա ուտում:
Հենց վոր գյուղացին գալիս եր, թողնում ե յին փախ-

չում թփերի վրա, թռչկոտում եյին ու ծրվծրվում, կարծես մարդուն ծաղրում եյին:

Գյուղացին ասավ—«Եսպես վոր շարունակվի, ինձ բան չի մնա»:

Գնաց մի ձող ցցեց արտի մեջտեղում, մի ուրիշ փայտ ել խաչածե կապեց նրան, իր մաշված արխալուղը գցեց վրան, մի բրբրված փափախ անց կացրեկ գլխին, մի կապուկ ծղնոտ ել կախ արավ թևքից ու հեռացավ:



Կարծես իսկ վոր մարդ լիներ կանգնած, մանավանդ յերբ քամին ել փչում եր և փեշերն ու յերկար թևերը շարժում:

«Իե, հիմի տեսնեմ, վոնց եք մոտ գալու».— մտածեց մարդը ու գնաց բանին:

2

Գնաց, գնաց.— ծրվծրվացին ճնճղուկները ու բոլորը մեկանց վեր թռան թփերից:

— Ե՞ս ինչ բան ե. դեռ չի գնացել,— գարմացան բոլորը. ողի մեջ մեկ-յերկու շրջան արին ու նորից իջան թփերի վրա:

Յեվ սպասում եյին, ծրվծրվում, ծղրտում, մինչև վոր մարդը վեր կենա կորչի: Բայց մարդը պինդ կանգնել եր մի վոտի վրա ու շարժում եր թևերը:

Ճնճղուկները համբերեցին, համբերեցին ու համբերությունները հատավ:

— Վեր կացեք, գնանք, արտի կողքերից գոնե կացենք, ասավ ամենից համարձակը:

Ու մի յերկուսը զգուշ մոտեցան արտին: Իսկ մյուսները ասին.

— Մխպեր, ով գիտի տակը ի՞նչ սատանություն կլինի: Թևերը վոր ենպես շարժում ե ու գլուխը տրմբտրմբացնում, եղ լավ նշան չի:

Ասին ու թռան գնացին ուրիշ արտեր:

Գ ը ի ը թե գյուղացին ի՞նչպես խրովիլակ շինեց:

97. Հասկեր

Իաշտի յերեսը
կոհակավորած՝
քամին տանում ե
հասկերը հորանց:

Վոսկի ցորենը
նոր հարսին վայել
գլխին թափանցիկ
շղարշ ե առել:

Նախշուն, փետրազարդ
ու պիտակ-պիտակ
թավիշ ե հագել
գանգրահեր վարսակ:

Վանա կատվի պես
բեխը շարժելով,
գարին ե կանգնել
իր քաջի բոյով:

Ցողունի վրա,
քամու որորով,
հասկը հաճարի
նիրհում ե որով:



98. Վոզնիև յեվ ոճը


1

Ամառվա մի տաք որ եր: Սրևի կիզիչ շողերը այրում,
խորովում եյին արտն ու արոտը: Դրսում ամեն ինչ լուռ

եր: Գյուղի առջևից հոսող վտակի վշտոցն եր լսվում. նա
յել եր պապանձվել:

Որվա այդ շրջ պահին գյուղի բոլոր յերեխաները հա-
վաքվել եյին ձորի գլխին ու նայում եյին ցած: Ներքև, ձո-
րի մեջ կոկոս եյին վողնին ու ոճը:

Կոկոսը կատաղի յեր: Ոճը սուլում եր, թռիչքներ եր
անում փշոտ վողնու շուրջը, բայց վոչ մի կերպ չեր կա-
րողանում բռնել: Վողնին ել փոքրիկ գլուխը հանում եր ու
հարմար բոպեյից ոգտվում, կծում ոճի մեջը, փորը, վիզը
ու կրծկվում: Վերջին
անգամ փշերի միջից
հանեց նա գլուխը,
հանկարծ բռնեց ոճի
պոչը և կրկին կրծ-
կրվեց:



2

Ոճը ինչքան աշ-
խատում եր, չեր կա-

րողանում ադատվի, ցավից ֆշշացնում եր, յերբեմն գլուխն
եր մոտեցնում պոչին, յերբեմն մարմինն եր դեռ ու դեռ
նետում: Վողնու փշերը ամուր ու սուր եյին և անխնա
բրբրում եյին նրա մարմինն ու գլուխը:

Հեռոգհեռո ոճը թուլացավ, մարմնի վրա բազմաթիվ
վերքեր բացվեցին, այլևս չեր սուլում, միայն ցնցվում եր
ամբողջ մարմնով:

Վողնին կծկված եր ամուր, ոճի պոչը պինդ կծած:
Բավական ժամանակ անցավ, մինչև ոճը բոլորովին
անշարժացավ: Արդեն սատկել եր:

Վողնին բաց թողեց նցա պոչը, գգուշուլթյամբ մի բանի
անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նայեց ոճին, պնաց
ու ծածկվեց մոտակա թփերի տակ:

Գ ը ի ը՝ ի՞նչ ե անում վողնին, յերբ ոճի հետ կովի յե ընկում:

Ա ո ա ծ.—Ոճը իր շապիկը կը փոխի, բնությունը չի փոխի:

Հ ա ն ե լ ու կ.—Քանի կարեա՝ կերկարի, քանի տաշեմ՝ կը
հաստանա:

99. Գորտն ու ագռավը



Գորտն ընկած ցամաք առուն,
կրուկրում եր ու կրուկրում:
— Քիչ կրուկրա, այ գորտ քեռի,
աշուն կը գա, շուր կը բերի,
հույս եր տալիս մի ծեր ագռավ:
«Ե, ի՞նչ անեմ, սիրաս վառավ,
մինչև ցամաք առուն շուր գա,
գորտի աչքն ել հո գուրս կը գա

100. Մուկն ու իր ձագը

Ճստան մուկիկը պատմում եր մայր Մարջանին:
Քանի հիշում եմ, մայրիկ, գողում եմ... Մի որ ուզե-
ցի ըլիթս գուրս հանել մեր ներքնատնից, հենց գուրս նա-
յեցի, տեսնեմ մի մեծ բակ: Մի բեխլի գազան, չալտիկ
մուշտակը, վարդագույն ըթով, կանաչ աչքերով, փափրիկ,
փափկամազ սուր ականջներով հանգիստ նստած ե, պոչիկն
ե շարժում: Ուզեցի գնամ ու ծանոթանամ:

Մայրիկն ասավ:
— Ի՞նչ լավ ե յեղել, վոր չես գնացել, չար կատվի հե-
տը չես ծանոթացել: Նա մեր փոխերիմ չար թշնամին ե,
ում ճանկը պցեց, հոգին կը հանե: Իեհ, լսիր, մի բան պատ-
մեմ քեզ:

Մի որ մենք տեսանք սյունի վրայից բերանը լայն բաց,
ատամները ցից, աչքերը սառած, գլխիվայր ներքև կախված
ե կատուն: Մենք խորհուրդ արինք ու վեց կտրիճներ սյու-
նով բարձրացան, վոր մլավանի թաթերը բանան. և հենց
վոր կպան կատվի թաթերին, իսկույն պոկ յեկավ ու ընկավ
գետին: Ընկել ե գետին, տեղից չի շարժվում, վոչ աչքն ե
թարթում և վոչ շունչ քաշում, իսկ և իսկ մեռած...

Մենք սիրտ առնելով՝ անկյունից ըլիչ-ըլիչ մոտեցանք
նրան: Ով վոր կտրիճ եր՝ պոչիցն եր քաշում, աքացի տա-
լիս, մեկը թաթով եր սպառնում նրան, մյուսը հեռվից լե-
զու յեր հանում, ամենից բաջը իր պոչն եր նրա ըթի մեջ
տանում: Վերջը կանգնեցինք, շրջան կազմեցինք... Մեր

մեծ ճարտասան, լեզվանի Զորին՝ յելավ բարձրացավ չար
կատվի փորին ու եսպես ճանեց,

| | |
|--|--|
| — Ձլան ու ֆստան, կար մի չար մաստան,— մի հակայորդի, խատուտիկ մորթի. մի անխիղճ կատու մի դահիճ կատու: Բեխերը աղի, | ինքը կատաղի, կախեցին գողին, կախած ել թողին: Կանգնել եմ փորին վսյ սրա որին... Քեֆ արեք, մկներ: սա գողի մեկն եր... |
|--|--|

Ճարտասան Զորին դեռ չեր ավարտել, հանկարծ Մաս-
տանը տեղից վեր թռավ. ինչպես մեր գլխին մի կրակ վա-
ռես, դեհ, փախի, փախանք... Վորիս հասավ նա՝ Չարդեց,
կոտորեց, թափեց անխնա...

Ամենից առաջ ճարտասան Զորին գոհ յեղավ կատվի
անկշտում փորին... Ահա թե ով ե են բեխլի կատուն, ում
հետ ուղել ես ծանոթանալ գուն... Ամեն որ մեզնից տասն
ե պակասում, նա յե մեր ցեղին անվերջ վնասում:

101. Դաշտում

Ինչքան լնվ ե գյուղում: Առավոտ-կանուխ հենց փոր
վեր ես կենում տեղիցդ, ուզում ես գուրս գնալ տանից:
Ողբ թարմ ե, շուրջդ խաղաղ: Գնում ես բարձրանում բը-
լուրը, հոգիդ ուրախանում ե դաշտերի և մարգագետինների
ընդարձակության վրա:

Դաշտերում հասկ ե բռնում, հասկավորվում ե հաճարը,
հասնում են վարսակը, գարին, ցորենը: Մարգագետին ու
հովիտ ծածկված են ծաղիկներով: Առավոտյան բարակ բա-
մին—մեզմ գեփյուռը—խաղում ե կանաչի հետ: Թոտերի և
ծաղիկների վրա նստած գողգողում են ցողի կաթիլները:
Յերկինքը ջինջ ու պայծառ ե, միայն արևելքում մի կար-
միր շերտ ե յերևում:

Բներից վերացան թռչունները և յերգեցին: Արտու-
տիկը սլացավ յերկինք և գեղգեղեց իր հնչուն յերգը:

Թռթռացին, ճախրեցին և իրար յետևից վազ ընկան
նախշուն թիթեռնիկները:

Եսպես պայծառ վառվում ե արշալույսը արևելքում և
անա հանկարծ գուրս ե գալիս արեգակը և լողում լազուր
յերկնքի յերեսով:

102. Վոզնին յել խուրդը

Մարգագետնում ապրում եյին վոզնին և խուրդը: Մո-
տեցավ ձմեռը: Վոզնին բուն չուներ, մրսում եր: Ահա նա
յեկավ խուրդի մոտ և ասավ.

Խուրդ, ըո բնումը ինձ տեղ տուր: Խուրդը թողեց
նրան իր բունը: Վոզնին այնպես չոեց իր փշերը, վոր խեղճ
տանտերը չեր կարողանում շարժվել իր բնակարանում:
Նա շարունակ կպչում եր իր հյուրի ասեղներին: Վերջա-
պես խուրդը դուրս յեկավ համբերությունից և խնդրեց
վոզնուն, վոր գնա իր բնից:

— Եստեղ ինձ համար շատ տաք ե և հանգիստ,—պա-
տասխանեց վոզնին տան տիրոջը,—յեթե բեզ դուր չի գա-
լիս իմ հարևանությունը, դու ինքդ հեռացիր այստեղից:

103. Քամի

Վը՛ղղղ, փչեց բամին...

Վը՛ղղղ... փչեց ու թռավ կտուրից-կտուր, բակից-բակ:
Կտուրների աղյուսները ցած թափեց, բակի դռները խփեց
իրար, սենյակների լուսամուտները բաց արավ:

Վը՛ղղղ... բակից դուրս փախավ փողոց:

Փողոցների ֆոշին հավաքեց՝ անցնողի յերեսովը տվեց,
Արամի գլխարկը թոցրեց, Լուսիկի հովանոցը շուռ տվեց ու
ճաղերը կոտրեց:

Փչեց, փչեց ու հետո, ասես կրունկի վրա պտտելով,
իրեն շուրջը բուրվելով, բարձրացավ յերկինք ու...վը՛ղղղ...

Քամին ու Լուսիկը տուն յեկան մի կերպ:

— Մայրիկ, — ասավ Արամը, — բամին իմ գլխարկը թըռ-
ցրեց, Լուսիկի յել հովանոցը շրջեց: Եդ վնրտեղից ե գալիս,
ի՞նչ բան ե բամին:

Վնրտեղից... Կան տաք յերկրներ և կան ցուրտ յեր-
կրներ: Տաք յերկրից ողբ շարժվում, գալիս ե դեպի ցուրտ
յերկրները, իսկ ցուրտ յերկրների ողբ շարժվում ե դեպի
տաք յերկրները: Ահա ողի շարժողությանը ասում են բամի:

Խլեզը մի ծանոթ ձայն լսեց, պոչը շարժեց և ուրախացավ: Վազեց թագնավեց մի փունջ խոտի յետև, աչքերը չռեց և ականջները սրեց:

Տը՛գ-տը՛գ... յերգում եր մի կապույտ ճանճ ու թըռչում խլեզի շուրջը: Խլեզը լսատու էր շրթունքներն ու մտքում ասում:— Ա՛յ թե կը բռնեմ...

Տը՛գ-տը՛գ... Ճանճը թռավ նստեց մի բարի վրա:

Խլեզը բարկացավ, ուզեց յետևել ճանճին, բայց անհանգիստ ճանճը նորից յետ յեկավ, նստեց խլեզի մոտ: Այդ փոքրիկ անխելքը չը նկատեց, վոր իրեն հետևում են յերկու սև աչքեր:

Խլեզը բարձրացրեց ըթիկը, բերանը բաց արավ, ու հափ... բռնեց ճանճին:

Բռնեց, աչքերը ճպճպացրեց և ուրախությունից պոչը շարժեց:


Ի՛նչ համեղ եր խլեզի նախաճաշը:

Տարվա վո՛ր յեղանակին և խլեզն արթնանում:

Ա ո ա ծ. — Վատվին՝ խաղ ե, մկան մահ ե:

105. Մոխակը վանդակում


— Ինչո՞ւ, իմ սոխակ, չես ուտում կերդ. ինչո՞ւ չես ասում անուշ յերգերդ: — Յերգում եյի յես ճյուղիցը դալար, վոսկե վանդակում լուռ եմ միալար: Դալար ճղնիկը ասում ե.— ապրի, վոսկե վանդակը ասում ե.— մեռի: Ընկերս ճյուղից



Ինձ ե ափսոսում. ձագերից զրկված՝ ել յերգ չեմ ասում:

Բաց կանեմ, սոխակ, դուռը վանդակիդ, թեիդ տուր, թո՛իր, հասի՛ր ձագերիդ...

Մեր տան մոտ բրուտանոց կար: Տեսնում եյի ինչպես բրուտները կավից ցեխ եյին պատրաստում և ցեխից շինում կուժ, կուլա, կճուճ, բրեղան, փարչ, կովկիթ և ուրիշ ամաններ:



Շինած ամանները չորացնում եյին, հնոցում թըրծում, հանում, ճաքճքածները ջոկում, իսկ լավերը մի կողմ դարսում ծախելու համար:

Ժամերով նստում ու նայում եյի բրուտներին. ինձ շատ եր դուր գալիս նրանց աշխատանքը:

— Ա՛խ, թե կը մեծանամ,

յես ել սրանց նման գեղեցիկ ամաններ կը շինեմ, — մտածում եյի յես:

Մի ուր ել կավից ցեխ պատրաստեցի, ամաններ շինեցի, կրակ արի, թրծեցի, ուզում եյի կրակից հանել, տեսնեմ բոլորը փշրված: Դու մի ասի՛ ամանները թաց-թաց եյի դարսել հնոցում:

Ա ո ա ծ. — Բրուտը կժի ունկը վոր կողմն ուզենա՝ են կողմը կը կպցնի:

107. Ժամացույցի սլաքները


Դահլիճի պատին կախած եր մի ժամացույց: Առավոտյան ժամը հնգից քսանյոթ ըոպե անց՝ նրա յերկու սլաքները հանդիպեցին միմյանց:

— Յես չեյի կարծում, — ասավ յերկար սլաքը — թե դու այդչափ դանդաղ կը լինես: Իրիկվանից տասներկու շրջան եմ արել. դու միայն մեկ շրջան:

— Այո, յես շատ ծանր եմ ման գալիս, — պատասխանեց կարճ սլաքը:

— Ինձ գարմացնում ե բո ծուլությունը, թե դու... Յերկար սլաքը դեռ խոսքը չեր վերջացրել, վոր հանկարծ դահլիճ մտավ մայրիկը:

Սլաքները լռեցին և դարձյալ լավեց ժամացույցի չըխըրխոցը:



Մայրիկը հատակն ավելաց, կահկարասիները մաքրեց ու հենց ուզեց ժամացույցի փոշին ել սրբել, մեկ ել... չըր՛խկ, յերկար սլաքը վայր ընկավ. մայրիկը վազեց և հայտնեց հայրիկին:

— Վոչինչ, — պատասխանեց հայրիկը. — մինչև նորոգելը մենք առանց յերկար սլաքի ել կարող ենք իմանալ, թե ժամը քանիսն է. լավ է, փոր կարճ սլաքը չի ընկել: Յերթամ ժամագործին բերեմ:

Որը քա՞նի ժամ ունի:

108. Գայլն ու շունը

Նիհար գայլը գյուղի մոտ պտտվելու ժամանակ տեսավ մի գեր շուն:

— Մի ասա, այ շուն, դուք փորտեղից եք կեր ճարում: Շունը պատասխանեց.

— Մարդիկ են տալիս:

— Յերևի մարդու համար դուք դժվար ծառայություն եք անում:

Շունն ասավ.

— Չե, մեր ծառայությունը դժար չէ: Մեր գործն է — գիշերը պահպանել բակը:

— Ուրեմն միայն դրա համար են ձեզ կերակրում, — ասավ գայլը. — Յես հենց հիմա յել կգամ այդ ծառայության, թե չե մեզ, գայլերիս, դժվար է կեր գտնել:

— Ինչ կա փոր, արի, — ասավ շունը, — տերս քեզ ել կը կերակրի:

Գայլն ուրախացավ և շան հետ գնաց մարդկանց ծառայելու:



Արդեն դարպասից ներս ելին մտնում, յերբ գայլը նկատեց, փոր շան վզի մազերը տեղ-տեղ քերծված են: Նա հարցրեց.

— Այդ ի՞նչից է բարեկամ:

— Ենպես, հեչ, — ասավ շունը:

Վո՞նց թե ենպես:

Ենպես ելի, շղթայից է: Յերեկները չե՞ փոր շղթայով կապված եմ լինում, շղթան տեղ-տեղ քերծել է վզիս մազը:

— Դե փոր եղպես է, մնաս բարով, — ասավ գայլը: — Յես ել չեմ գա մարդկանց մոտ: Լավ է ազատ լինեմ ու լղար, քան թե գեր ու շղթաների մեջ:

Չալ հավը կըռթկըռթում էր:

— Թուխուշիկս թուխս է գալիս, — ասավ մայրիկը, — վեր կենամ տեսնեմ, փորտեղից եմ ձու ճարում, փոր Թուխուշիկիս տակը զնեմ:

Գնաց հարևաններից մի տասը-տասնհինգ ձու փոխ առավ, բերեց տուն: Մաղի մեջ դարման ածեց, ձվերը դարսեց, Թուխուշիկին ել նստեցրեց ձվերի վրա:

Յերեք շաբաթ Թուխար վեր չեր կենում ձվերի վրայից: Միայն կուտ ուտելու և ջու խմելու համար եր դուրս գալիս մաղից:



Կուտ ուտելուն պես՝ նորից մտնում եր մաղը, ձրվերը շուռ տալիս, խընամքով նրատում, փոր ձրվերը միակերպ տաքանան:

Տարությունից ձվի դեղնուցի մեջն յեղած սաղմը դարգացավ. արյան բիծ դարձավ, ջղեր արձակեց ու տարածվեց ամեն կողմ:

Արյան բիծը մեծացավ, մեծացավ ու յերեք շաբաթից հետո մերկ ճուտ դարձավ. ճուտը կտարեց ձվի կեղևը ներսից ու դուրս յեկավ լույս աշխարհ:

Բոլոր ճուտիկներն եղպես մեկ-մեկ դուրս յեկան իրենց ձվերից:

Մայրիկը ալրաշաղախ արեց, փշրեց առաջները, ամանով ել ջուր դրեց, փոր խմեց: Շատ ծիծաղելի յեր նրանց ջուր խմելը:


Կանգնում ելին ամանի ափին, կտցով ջուր վերցնում, հետո գլուխները վեր բարձրացնում ու կուլ տալիս: Հենց փոր նրանք ուտում-խմում կշտանում ելին, վազում ելին իրենց մոր մոտ:

Մայրը նստում եր գետնի վրա, ճուտիկներին անում թևերի տակ ու ծվարում ելին միասին:

Լինում ե չի լինում մի աղքատ մարդ: Ես աղքատ մարդը գնում ե դառնում մի ձկնորսի շալակտարր: Որական մի բանի ձուկն ե աշխատում, տուն ե բերում, ու նրանով ապրում են ինքն ու իր կինը:

Մի անգամ ել ձկնորսը մի սիրուն ձուկն ե բռնում, տալիս շալակտարին, վոր պահի, ինքն ել յետ ջուրն ե մրտնում: Ես շալակտարը գետափին նստած՝ նայում ե, նայում սիրուն ձկանն ու միտք ե անում.

— Տեր աստ-
ված, սա յել
վոր մեզ նր-
ման շունչ
կենդանի յե,
դու ասա՛ սա
յել, մեզ նր-
ման, ծնող ու-
նի, ընկեր ու-
նի, աշխարհ-
քից բան ե
հասկանում,
ուրախու-
թյուն կամ
ցավ ե գգում՝
թե չե...



Հենց ես մտածելու ժամանակ ձուկը լեզու յե առնում:

— Լսի,—ասում ե,— մարդ ախպեր: Ընկերներին հետ յետ խաղում եյի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի ով գիտի, իմ ծնողը ինձ վորոնում ե ու լաց ե լինում, հիմի ով գիտի ընկերներս տխրել են: Յես ել, տեսնում ես, ինչպես եմ տանջվում, շունչս կտրվում ե ջրից դուրս: Ուզում եմ յետ գնամ, ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ ես պաղ ջրում: Յեկ խեղճ արի, ազատ արա ինձ, բայց թող գնամ...

Եսպես եր ասում ցանձ, շատ ցած ձայնով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով:

Չարմանում ե աղքատ շալակտարը, մեղքը գալիս ե, առնում ե, յետ գցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չը լինի բո ծնողը.

թող չը տխրեն բո ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում ե շալակտարի վրա:

— Տո, ասում ե,— յես եստեղ ջրի մեջ թըջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես՝ յետ ջուրը գցում... Դե գնա կորիր, ել իմ աչքին չերևաս, գնա սովից մեռի:

Տոսրակն ել ձեռից խլում ե ու ճամպու դնում:

Տես՞ Լ ես ինչպես են ծուկ բռնում. պատմի բ:

Դրի՛ր ինչպես ընկավ ձուկն ուռկանը յեվ ի՞նչ են անում հիմի նրա ծնողներն ու ընկերները:

Հանելուկներ. Ես կողմը դար, ես կողմը դար, մեջն անգաղար:

Ձին գնաց, թամբը մնաց:

111. Կենդանիների վեճը

Ձին, կովն ու շունը վիճում եյին՝ թե իրենցից վորն ե մարդուն ամենից շատ ոգուտ տալիս:

— Իհարկե յես,—ասում եր ձին,— յես իմ տիրոջ համար բեռներ եմ կրում, անտառից փայտ եմ բերում, նա ինձ հեծնում, բաղաբն ե գնում:




— Վոչ, յես եմ ամենից ոգտակարը,—ասում եր կովը,— նրա ամբողջ ընտանբբը իմ կաթովն եմ կերակրում:



— Միտվում եք,—վրա բերեց շունը.— յեթե յես չը լինեմ, ձեզ ել, ձեր տվածն ել կը գողանան իմ տիրոջ տանից:

Այս ազմուկի ժամանակ վրա հասավ տերը:

— Իզուր եք վիճում,—ասաց նա.— դուք բոլորդ ել պետք եք ինձ, ամեն մեկդ իր գործն ունի և մյուսի աշխատանքը չե կարող կատարել: Յեվ մի՞թե միայն դուք եք, վոր ոգուտ եք տալիս. նայեցեք ձեր շուրջը. մի՞թե անոգուտ են ապրում մեր հավերն ու բաղերը, խոզն ու կատուն, գոմեջն ու յեզը...



Ի՞նչ ոգուտներ են տալիս ընտանի կենդանիները:



Խոնարհ ու հեղ
մի հոգնած յեղ
արորն ուսին,
ճանճը պողին,
մի իրիկուն
գալիս եր տուն:
Մին ել ճամպին
մի ուրիշ ճանճ
են նստածին

ասաց. —
«Տո մանչ,
ես յեզան հետ
վճրտեղից եղ»:
Նա ցից արած
քիթը, ասաց.
— Մենք վորտեղից.
վարում եյինք,
վարատեղից:

Այս առակն ինչ է ուղտւմ տակ:

113. Ինչո՞ւ կատուները ուտելուց հետո յեն լվացվում

Շատ-շատ տարիներ առաջ կար մի խորամանկ ծիտիկ:
Մի որ այս ծիտիկը այնքան թութուաց, այնքան ծլվլաց
կատվի շուրջը, վոր մեկ ել հանկարծ ընկավ նրա ճանկը:

Կատուն բերանն առավ խեղճ ծիտիկին ու փախցրեց
մի խուլ անկյուն, վոր տնուշ անի:

Իսկ ծիտիկը ասում է.

— Գեռի փխոն, յես գիտեմ, վոր կատուները շատ մաք-
րասեր են, նրանք առանց լվացվելու յերբեք բան չեն
ուտում:

— Ճիշտ է, — ասաց կատուն, — դու ուղիղ ես ասում, յես
ել առաջ լվացվեմ...

Ծիտիկին նստեցրեց իր մոտ բարի վրա, իսկ ինքը
սկսեց ծանր ու բարակ դնչիկը լվանալ ու սրբել թաթիկ-
ներով: Ծիտիկն ել հո հիմար չեր, վոր նստած սպասեր
կատվին. նա իսկույն ծլկեց, նստեց թթենու վրա և իր
ուրախ յերգը ծլվլացրեց:

Բարկացավ մեր մաքրասեր փխոն, թաթով սպառնաց
ծիտիկին ու ասաց.

— Ուրիշ անգամ յես առաջ կուտեմ, հետո կը լվացվեմ:

Խորենի հայրիկը այնորը շատ հոգնած վերագարձով
տուն: Ծանր բեռներ կրելուց նրա մեջքը ցավում եր, վոր-
ների մեջ ել ուժ չեր մնացել:

Հայրիկը անկողին մտավ
և մի բանի որ տեղից չի կա-
րողանում վեր կենալ, փալանը
ուսերին գցել, մշակություն
անել:

Ո՞վ պիտի ամբողջ ընտա-
նիքը կերակրի: Խորենը յտում
է հայրիկի աքոցներն ու մտա-
ծում. ի՞նչու ինքը մեծ չէ,
ուժեղ չէ...

Առավոտյան վաղ, մայրի-
կը գեռ բնած է լինում, Խո-
րենը շտապով հագնում է իր
շորերը, գլխին դնում հայրիկի
փափախը, ուսերից գցում
մեծ փալանը ու փողոց դուրս
գնում:

Ի՞նչով նա մշակ չէ. ի՞նչու նա չի կարող բեռներ կրել,
փող աշխատել, հայրիկին ու մայրիկին, յեղբայրներին ու
քույրերին պահել:

Ի՞նչ գործ կարող եր անել Խորենը:



115. Ինչպիսի բույսեր կան

Բույսերից մեկ հայտնի յեն ծառերը, թփերը, հացա-
բույսերը, բանջարները, սունկերը և խոտերը:

Ծառն ունի արմատ հողի մեջ, մի հաստ բուն, շատ
փոստեր և ճյուղեր: Ծյուղերի վրա կան տերևներ և ասեղա-
նման փշեր: Թուփն ունի վոչ թե մի բուն, այլ մի բանի
փոքրիկ բունիկներ:

Հացաբույսերն ունին մեջը դասարկ ցողուններ, ցո-
ղունների ծայրին հասկեր՝ հատիկներով լիքը:

Խոտն ունի շատ բարակ ցողուն:

Սունկը չունի վոչ տերև և վոչ ճյուղեր. վերևից ունի մի գլխարկ, տակից՝ արմատ-կոթը:
Բանջարեղենների մի քանի տեսակներն ունին կճեպ և հատիկներ, միքանիսը՝ արմատներ, միքանիսն ել՝ տերևներ:

116. Գայլն ու կատուն

Գայլն անտառից
փախավ գյուղը:
«Նեղն եմ, նեղը,
ասավ կատվին,
քո հոր պատվին,
ասլան բալա,
մի ճար արան,
մի տես հլա՝
վորսորդ ու շուն,
թագի թուլա
միսս են կոծում,
ինձ հալածում:
Աստված կտրի
դրանց հոտը,
մի մարդ ցույց տուր,



«Յես ել գիտեմ,
վոր անդին ե,
բայց վոր նրա
հորթն եմ կերել»...
— Բիկիդ կանգներ,
լավ չես արել:
Վոր եդպես ե, Հովսեփի մոտ...
«Նրանից ել կանեմ ամոթ.
դու մի ասի, ես ամառը
հանկարծ չուտեմ նրա գանդը»:
— Ո՞ւմ ասեմ ել.
հա՛, մեր Զաքին:
«Ես գարնանն ել՝
նրա մաքին»:
— Ո՞վ մնաց ել...
Հա՛, յերեցը...
«Ես աշնանն ել՝
դրա եծը»:
— Այ դու ուտես



պահվեմ մոտը»:
— Այ ցեղակից,
գոչեց կատուն,
գնա մտիր
Մարոյի տուն,
նա չափազանց
բարի կին ե:

չոռի մեծը.
անդ գող, վատթար.
գյուղը մտար...
տեղ չգտար:
Գյուղն հիմար ե,

վոր թշնամուն
պատասպարե...
Ով ինչ բբդի,
են կը խրթի:

117. Յերիտասարդ քարտաշը

Յերկու քարտաշ, մինը անել, մինը շահել, քարե պատ ելին դնում բարձր սանդուխների վրա կանգնած:
Ներքևը—գետնին ընդարձակ քաղաքն եր փոխած, իսկ նրանց շուրջը քամին եր ոռնում գայլի նման և ուզում եր պոկի սանդուխի տախտակներն ու խորտակի նրան:

Հանկարծ յեկավ
քամու մի ուժ-
գին թափ, տախ-
տակները պոկեց,
սանդուխան իրա-
րից հանեց և շը-
պրտեց գետին:
Խեղճ քարտաշ-
ները մնացին մի
տախտակից կախ
ընկած:
— Ընկեր, մեր
կյանքի վերջն ե,
այն տախտակը
յերկուսիս չի դի-
մանա,—ասավ յե-
րիտասարդ քար-
տաշը:



— Վայ ինձ, յես ինչպես մեռնեմ, ո՞վ կը կերակրի իմ հինգ վորդուն,—մղկտաց ծերը:
Յերիտասարդը հուզվեց ու ասավ.
— Յես եմ ու յես, ընկեր, ուրիշ վոչոք չունեմ, վոր դարդ անեմ, թող յես մեռնեմ... մնաս բարով,—ասավ յե-
րիտասարդ քարտաշը, բաց թողեց բռնած տախտակն ու ըն-
կավ գետին: Ընկավ գետին ու ջախջախվեց:
Մարդիկ հասան ոգնության, ծեր քարտաշին ազատեցին:

Ու նա այնուհետև, իր ամբողջ կյանքում, արտասուքն աչքերին պատմում էր յերիտասարդ ընկերի անձնագոհությունը: Հիշում էր նրա մարդասիրությունը, և ամբողջ ընտանիքով որհնում էր նրա հիշատակը:

Կալ արա՞վ յերիտասարդ փութաւր:

118. Ինձ ո՞վ չի սիրում

1

Գարունն ասում էր.

— Յես բերում եմ պայծառ արև ու տաք որեր: Յես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով ու զարդարում եմ անտառները կանաչ տերևներով: Յես սփռում եմ ամեն տեղ ծաղիկ ու թիթեռ: Յես կանչում եմ թռչուններին հեռու յերկրներից ու աշխարհը լցնում եմ յերգերով:

Ինձ ո՞վ չի սիրում:

2

Ամառն ասում էր.

Յես վոսկեգոծում եմ արտերը ու կրուացնում եմ հասկերի գլուխները: Յես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, դեղձ ու խաղող: Յես թռցնում եմ ճուտիկներին բներից և տանում եմ մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազատ սարերը:

Ինձ ո՞վ չի սիրում:

3

Աշունն ասում էր.

— Յես գուլյն-գուլյն ներկում եմ ծառերը և ճամպա յեմ դնում թռչնակներին դեպի տաք յերկրները: Յես լցնում եմ մառանները, յես եմ շարում մրգերի կախանները: Յես բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:

Ինձ ո՞վ չի սիրում:

4

Զմեռն ասում էր.


— Յես խաղացնում եմ սպիտակ փաթիլները ողի մեջ և ծածկում եմ ձյունով սար ու ձոր. յես կապում եմ գետերը ամուր սառուցով: Յես բերում եմ ձեզ ձնագնդի, սահնակ ու սղզան, յերկար յերեկոներ ու անվերջ հեքյաթներ: Յես բերում եմ ուրախ նոր ճարի:

Ինձ ո՞վ չի սիրում:

Դու ամենից ավելի վորն ես սիրում յեմ ինչո՞ւ:


119. Նոր հաց

Կարմիր արևը մայր էր մտնում: Գուրս յեկավ գյուղացին իր յերեխաների հետ դաշտը: Մարգագետինների վրա արդեն նստած էյին խոտի դեղերը, իսկ արտերում շարժվում էյին խիա և հասած հացաբույսերը: Այ ինչ լավ տարի յե, յերեխաներ: Անասունները կեր կունենան, մենք ել հաց:



Պոկեց գյուղացին ցորենի հասկը, տրորեց բռան մեջ, տեսավ վոր հասկիկը գուլյնը փոխել է, առամոլ փորձեց — չորացել է, դրթրթում է: «Հնձելու ժամանակն է, յերեխաներ: Մայրիկը ամբարի վերջին ալյուրը խմոր արեց»:

Մյուս որը մեծ ու փոքր գուրս յեկան դաշտ: Իրար յետեվից շտապ-շտապ խուրձեր կապեցին, այնպես վոր յերեկոյան դեմ արդեն բարձր բարդերը կանգնած էյին արտերի մեջ: Իեռ հունձը չեր վերջացած, յերբ կալը բաշեցին և բյուլաշը ձեծեցին: Հայրը մի տոպրակ ցորեն տարավ ջաղաց և այնտեղից բերեց փափուկ ալյուր: Մայրը թթխմոր գտավ և մյուս որն արդեն թաժա հաց կերան յերեխաները:



Յ Ա Ն Կ

ՀԵՂԻՆԱԿ

ԵԶ

| | | |
|--------------------------------|---------------------------|----|
| Կարմիր Արև | Ա.Ս. Խնկոյան | 3 |
| 1. Աշուն | | 4 |
| 2. Անտերև ծառը | Ա.Ս. Խնկոյան | 4 |
| 3. Լուսաբացին | Հովհ. Թումանյան | 5 |
| 4. Են համանակն եր | Ա.Ս. Խնկոյան | 5 |
| 5. Գայլի ձագերը | | 6 |
| 6. Աշուն | | 7 |
| 7. Սերոբը | Ա.Ս. Խնկոյան | 7 |
| 8. Հովվի հրաժեշտը | Թարգմ. Հովհ. Թումանյան | 8 |
| 9. Ծիծեռնակի չուն | | 8 |
| 10. Ինչու յեն հալածում մեզ | | 9 |
| 11. Լազլազը | (Ժող.) Ա.Ս. Խնկոյան | 10 |
| 12. Ճամբորդներ | | 11 |
| 13. Ջաղաց | Ա.Ս. Խնկոյան | 12 |
| 14. Կատու | (Ժող.) | 13 |
| 15. Կաքավիկ | Հովհ. Թումանյան | 14 |
| 16. Աղվեսն ու իր պոչը | Ա.Ս. Խնկոյան | 14 |
| 17. Արարի ձին | | 16 |
| 18. Են հիլ եր | | 17 |
| 19. Մանկական հեքյաթ | | 18 |
| 20. Քամին ու մարազը | Ա.Ս. Խնկոյան | 18 |
| 21. Ո՞վ է ուժեղը | | 19 |
| 22. Չարի վերջը | Հովհ. Թումանյան | 19 |
| 23. Գետափին | ռուս. Թարգմ. Ա.Ս. Խնկոյան | 22 |
| 24. Չմեռ | | 24 |
| 25. Չմեռը | Թարգմ. Ա.Ս. Խնկոյան | 24 |
| 26. Չմեռը | | 25 |
| 27. Քուն | | 26 |
| 28. Սուրիկի մտածումները | | 26 |
| 29. Չմեռ պապին | Ա.Ս. Խնկոյան | 26 |
| 30. Կրակը | | 27 |
| 31. Նկարիչ | Ա.Ս. Խնկոյան | 27 |
| 32. Վոսկի իլիկը | » » | 27 |
| 33. Աղվեսն ու գայլը | » » | 31 |
| 34. Քաջ նապաստակի պատմությունը | Մամին-Սիրիբյակ | 33 |
| 35. Շունն ու կատուն | Հովհ. Թումանյան | 35 |
| 36. Փոքրիկ գյուղացին | Նեկրասովից՝ Ա.Ս. Խնկոյան | 37 |
| 37. Ելի քաղացի | Հ. Ապրեսյան | 38 |
| 38. Փըշկո-Նունոն | Ա.Ս. Խնկոյան | 39 |
| 39. Չմասն ցրաին | | 42 |

| | | |
|--|---------------------|----|
| 40. Պատկեր | | 43 |
| 41. Գարուն | | 44 |
| 42. Սիրուն գարուն | | 45 |
| 43. Են հիլ եր | | 45 |
| 44. Արագիլներ | | 45 |
| 45. Մարտի սկիզբը | Պ. Պոռչյան | 46 |
| 46. Առաջին ծաղիկներ | Ա.Ս. Խնկոյան | 46 |
| 47. Մանուշակ | Գեվորգ Գողոթյան | 47 |
| 48. Մեղունների առաջին պտույտը | Ա.Ս. Խնկոյան | 47 |
| 49. Ծիծեռնակին | » » | 48 |
| 50. Արագիլ | (Ժող.) | 49 |
| 51. Գետակ | | 49 |
| 52. Մարտ | (Ժող.) | 48 |
| 53. Գարնան գալը | Ա.Ս. Խնկոյան | 50 |
| 54. Խոսնակ թռչունը | » » | 50 |
| 55. Գառնիկ ախպեր | Հով. Թումանյան | 51 |
| 56. Հատիկ | Թարգմ. Ա.Ս. Խնկոյան | 56 |
| 57. Փոքրիկ յերկրագործ | | 57 |
| 58. Կարմիր բալիկը | Ա.Ս. Խնկոյան | 57 |
| 59. Արևն ու ծիածանը | | 58 |
| 60. Ծիածան | Ա.Ս. Խնկոյան | 49 |
| 61. Կողովագործ աղվեսը | » » | 59 |
| 62. Արտուտի յերգը | » » | 61 |
| 63. Շողիկի յերազը | | 61 |
| 64. Ծտի հարսանիքը | Գ. Գեմիրճյան | 62 |
| 65. Արջի ընտանիքը | | 63 |
| 66. Ուլունք | (Ժող.) | 64 |
| 67. Ճոխիկը | Ա.Ս. Խնկոյան | 65 |
| 68. Գիշեր | | 68 |
| 69. Ճնճղուկներ | | 68 |
| 70. Տերևները | | 69 |
| 71. Լորենի | | 69 |
| 72. Ճանճը, Չվի կճեպը և Կավի գունդը (Կովկ. հեքյաթ) | | 70 |
| 73. Կեչի ծառ | Թարգմ. Ա.Ս. Խնկոյան | 71 |
| 74. Շունն ու ձին | » » » | 71 |
| 75. Կանաչիլը, այգի | » » » | 72 |
| 76. Ուռենի | » » » | 72 |
| 77. Գյուղացին ու արջը | » » » | 73 |
| 78. Նապաստակի տունը | » » » | 75 |
| 79. Կռունկն ու աղվեսը | » » » | 77 |
| 80. Ամառ | | 80 |
| 81. Ամառ | | 80 |
| 82. Մայրը | | 81 |
| 83. Ամառվա գիշեր | | 81 |

| | | |
|--|-------------------------------|-----|
| 84. Ցողունը և հասկերը | Թարգմ. Ա.Յ. Խնկոյան. | 82 |
| 85. Հնձվորներ | Աղայան | 82 |
| 86. Թրթուրն ու խխունջը | Թարգմ. Ա.Յ. Խնկոյան | 83 |
| 87. Թռչունի մտածմունքը | Հովհ Թումանյան | 85 |
| 88. Բուրի ձագերը | Թարգմ. Մ Վուրգարյան | 85 |
| 89. Մոծակի մահը | Ա.Յ. Խնկոյան | 86 |
| 90. Վարդն ու յեղինջը | » » | 86 |
| 91. Կաղնու վարձվորները | | 87 |
| 92. Անճոռնի ճռտիկը | | 87 |
| 93. Բլլիկ ձկնիկը | Ա.Յ. Խնկոյան | 88 |
| 94. Չարչի Հակոն | » » | 89 |
| 95. Ծաղիկներ, տերևներ և պտուղներ | » » | 91 |
| 96. Խրավիլակ | | 91 |
| 97. Հասկեր | Ա.Յ. Խնկոյան | 93 |
| 98. Վողնին և ոճը | | 93 |
| 99. Գորտն ու ազուսիլը | Ա.Յ. Խնկոյան | 95 |
| 100. Մուկն ու իր ձագը | » » | 95 |
| 101. Դաշտում | » » | 96 |
| 102. Վողնին և խուրդը | » » | 97 |
| 103. Գամի | | 97 |
| 104. Խելքի նախածաշը | | 98 |
| 105. Սոխակը վանդակում | Ա.Յ. Խնկոյան | 98 |
| 106. Բրուտը | | 99 |
| 107. Ժամացույցի սլաք- ները | | 99 |
| 108. Գայլն ու շունը | | 100 |
| 109. Թուխար | | 101 |
| 110. Շալակտարը | | 102 |
| 111. Կենդանիների վեճը | | 103 |
| 112. Ճանճ Ա.Յ. Խնկոյան | | 104 |
| 113. Ինչո՞ւ կատուները ու- տելուց հետո յեն լվացվում | | 104 |
| 114. Փոքրիկ մշակը | | 105 |
| 115. Ինչպիսի բույսեր կան | | 105 |
| 116. Գայլն ու կատուն | Ա.Յ. Խնկոյան | 106 |
| 117. Յերիտասարդ քարտաշը | | 107 |
| 118. Ինձ ո՞վ չի սիրում | | 108 |
| 119. Նոր հաց | Ա.Յ. Խնկոյան | 109 |



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.

ԴԱՍԱԳՐՔԵՐ

- 1. Իստրնիկեր—Ա. տարի (Այրբենսորան). Յերբորդ տպ. 50 կ.
- 2. Կարմիր Արեւ—Բ. տարի, կազմեցին և խմբագրեցին
Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան, պատկերազարդ 60 կ.
- 3. Կարմիր Արեւ—Գ. տարի, կազմեցին և խմբագրեցին
Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան, պատկերազարդ 80 կ.
- 4. Կարմիր Արեւ—Գ. տարի, պատկերազարդ, կազմեց
և խմբագրեց Սուրխաթյան: 1 ր. —
- 5. Կարմիր Արեւ—Ե. տարի, պատկերազարդ, կազմեց
և խմբագրեց Սուրխաթյան: 1 ր. 20 կ.
- 6. Կարմիր Արեւ—Զ. տարի (պատկերազարդ),
կազմեց յեւ խմբագրեց Սուրխաթյան 1 ր. 80 կ.
- 7. Նիկ. Սարգսյան—Դասագիրք աշխարհագրու-
թյան, Ա. մաս—Բուսարանություն 75 կ.
- 8. Լ. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ պատ-
կերով 19 նկարով), թարգմ. Ա. Տ.-Պ. 40 կ.
- 9. Մ. Արեղյան—Առաջնորդ հայոց լեզվի նոր
ուղղագրության 8 կ.
- 10. Ս. Մուշեղյան—Ինչպե՞ս կազմել հերթարիում 10 կ.
- 11. Ռ. Գաբրիելյան—Բնագիտական քարտեզներ,
Ա. մաս, բացատր. տեղատու—Բույսի կյանքը 40 կ.
- 12. Ռ. Գաբրիելյան—Բնագիտ. քարտեզներ, Բ. մաս,
բացատր. տեղատու—Մակեդոնյան բնություն 40 կ.
- 13. Վ. Աւանով—Մանկան ուսուցիչը (Ասորերեն
դասագիրք), Ա. տարի 25 կ.
- 14. Գ. Աւանով—Նույնը, Բ. տարի 40 կ.
- 15. Գ. Աղիջյան—Աշխատանքի դպրոց (ձեռնարկ) 50 կ.
- 16. Վ. Կեմարիկ—Զննական լեզվաբանություն,
թարգմ. Հ. Նավակաարիկյան 2 ր.
- 17. Ռոտ. Անիբայան—Գլխապահան լեզուներ, Ա. տարի 1 ր. —
- 18. Գրամա-իզացիան Ա. աստիճանի դպրոցում,
թարգմ. Ա. Շավարշյանի 10 կ.
- 19. Պ. Կոպրինից—Քաղաքական դրողատության
ձեռնարկ (Հ. Ս. Ս. Հ. Պետրասի խմբ.
մարմնի հավելումներով) 40 կ.
- 20. Գրողներ—Այրբենսորան մեծանաստակների համար 20 կ.
- 21. Ա. Կիսելյով — Տարրական լեզվաբանություն, ամբողջ,
թարգմ. Ա. Տանյանի
- 22. Բեմ, Աորսովե, Վոլիով—Հանրահաշիվ, Ա. և Բ. մաս:

Գները նշանակված են չեղվանեցներով:

ԳԻՆԸ 60 Կ.

Ոտար տեղերից գիմել՝ Յերևան, Պետրաս, Эривань
(Армения), Госиздат.